

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutian» (education) weekly «Кртутян» (образование) еженедельник 02.03.2022թ. չորեքշաբթի թիվ 10 (1035)

Գրաբար



Ի՞նչ է գրաբարը. մեր մայրենի լեզվի ժամանակային մի փոփոխություն, թե՞ մեր հնագույն լեզվի միայն գրավոր մի տարբերակը...

Երջանկահիշատակ արքեպիսկոպոս Արսեն սրբազանը մի առիթով հիշել է. Վազգեն Ա վեհափառը հաճախ էր հարցնում՝ տեսնես երբեք գրաբար խոսել՞ ենք...

Մեզանում վաղուց կա այն մտայնությունը, թե դեռևս վաղնջական ժամանակներից գրաբարը եղել է միայն գրավոր լեզու, գրավոր խոսքի միջոց, իսկ ընդհանրապես կենցաղում ի սկզբանե կիրառել ենք աշխարհաբարը:

Դրա պատճառը, թերևս, հենց գրաբար բառի մեջ է՝ գրա - բար: Առաջին բաղադրիչն անմիջապես գիր-ն է մատնանշում եւ բար բաղադրիչը թվացել է ոչ էական, այն պարզապես ընկալվել է որպես վերջածանց, եւ այստեղից էլ գրաբարը ընկալվել է որպես գրելու լեզու, գրավոր հաղորդակցվելու միջոց:

Գիր եւ բար: Անշուշտ՝ ոչ բառ (թեև բառ-ը, որպես խոսքի պտուղ, խոսքի մի մաս, ծագում է հենց բարից): **Բար՝** պտուղ, բերք... Ինչո՞ւ գրաբար-ը չընթերցել որպես գրի բերք, գրավոր հունձք, ողջ գրավոր պաշարը (տեղին է նկատել, որ արար վերջածանցի արմատը դարձյալ բար = պտուղ-ն է). այն ամենը, ինչ արարվել, հավաքվել, մշակվել, դարձել է մատյան, երգ, դեղատոմս, շարակնոց, մաշտոց... Ողջ ստեղծագործ միտքը, գեղարվեստական ու տեղեկատվական ողջ հավաքչությունը... **Գրաբար,** այսինքն՝ ոչ միայն լեզու, այլև այդ լեզվով արտահայտված ողջ խոսքը, ստեղծված ողջ գանձարանը, եւ լեզվի հնարավորություններն էլ (հետագա ստեղծվելիքը)՝ դրան գումարած... **Լեզուն մտածող ություն է:** Ուրեմն մեր ժողովրդի ողջ իմաստությունն է ամբարված գրաբարում: Եվ կամ մեր ժողովրդի ողջ իմաստությունը, գոնե զգալի մասը, արարված է գրաբարով...

Այսպես, թե այնպես, նվազագույնը 4500 տարի մտածել, գրել եւ համաժամանակյա արժեքներ ենք ստեղծել հենց գրաբարով: Չմոռանանք, որ աշխարհաբար գրական հայերենն ընդամենը 200 տարվա պատմություն ունի:

Աշխարհի խոշորագույն համալսարաններում (նաեւ մեզանում) որպես կանոն ուսումնասիրում են լատիներեն: Ինչո՞ւ: Անշուշտ՝ ոչ այդ լեզուն կենցաղում գործածելու համար: Թեև որպես թեւավոր խոսք՝ լատիներեն մեջբերումները զարդարում են եվրոպական հենց լատիներենի հիման վրա զարգացած հայտնի լեզուները (չմոռանանք՝ լեզուն մտածողություն է): Լատիներեն սովորում են, որպեսզի կարողանան լատիներեն բնագրեր ուսումնասիրել: Որովհետեւ այդ լեզվով ստեղծված, նկարագրված եւ պահպանված են համամարդկային մտքի մնայուն արժեքներ...

Իսկ գրաբարով...

Միայն Մատենադարանում պահվող ձեռագրերի հազիվ միայն մեկ երրորդն է ամբողջությամբ ուսումնասիրված, ծանոթագրված, հրատարակված... Կարելի՞ է լինել լիարժեք բանասեր, պատմաբան՝ առանց գրաբարի իմացության... Իսկ իրավաբան, տնտեսագետ, բժիշկ, աստվածաբան... Մարդկային մտավոր գործունեության բոլոր ոլորտներում, մարդու մարմնի իսկ հետազոտությունից մինչեւ հեռավոր աստղերի դիտարկումները, մեր նախնիներն այնքան հիմնարար եւ այնքան մանրակրկիտ տեղեկատվություն են հայթայթել հաջորդող սերունդների համար, որ առանց դրա այսօր պարզապես հնարավոր չէ որեւէ ամբողջական ուսումնասիրություն կատարել...

Այսքանից հետո ասե՞նք, թե՞ չասենք, որ այսօր գրաբար սովորեցնում ենք միայն Գելորգյան հոգևոր ճեմարանում եւ հատուկետ բուհերի հատուկետ բաժանումներում... Ասե՞նք, թե չասենք, որ գրաբարից հեռանալով հեռացել ենք ինքներս մեզանից եւ աստիճանաբար նաեւ այն հոգևոր պաշարից, ինչը եղել է մնում է մեր հպարտության առարկան՝ մեր ընդհանրական մշակույթից... Անկախությունը վերագտած մեր հայրենիքի կրթական համակարգի բարեփոխումների ծիրում հարկ է, որ **գրաբարը մտնի հանրակրթական դպրոց:** Գոնե ավագ դասարաններ: Իսկ բուհերում, կարծում ենք, պիտի ուսումնասիրվի համատարած եւ ըստ արժանվույն:

Աշխարհի ամենահարուստ ու ամենագեղեցիկ լեզվին տիրապետելով՝ կունենանք նույնքան հարուստ եւ նույնքան գեղեցիկ ներաշխարհ:

Ամենաանաղարտ հայերենը գրաբարն է:

Անդրանիկ



Ամեն հայ ունի իր **Արարատը:** Եվ որքան էլ փորձես գեղեցիկ ու դիպուկ նկարագրել, թե ինչ է **Արարատը** հայի համար, միեւնույնն է, քո նկարագրությունը միշտ էլ զիջելու է այն **Արարատին**, որ կա յուրաքանչյուր հայի հոգում: Գիշտ այդպես էլ յուրաքանչյուր հայ ունի իր **Անդրանիկը**... Երբ ասում ենք՝ **արքա**, անմիջապես պատկերացնում ենք **Տիգրան Մեծին:** Ասում ենք՝ **սպարապետ**, պատկերացնում ենք նախ **Վարդան Մամիկոնյանին:** Ասում ենք՝ **զորավար**, հառնում է **Անդրանիկ** կերպարը:

Անդրանիկ Օզանյան՝ հայոց փառաբանված ազգային հերոսը, ով ոչ մի ճակատամարտ տանուլ չի տվել, ով անհամեմատելի, աներեսակայելի սխրամքների շնորհիվ կենդանության օրոք արդեն իսկ լեզունդ էր, ում ժողովուրդը սիրում է, ինչպես իր էպոսի քաջազուններին, զորավար, ում նվիրված երգերը երգում էր անգամ թշնամին... Բայց՝ չչարունակեմ: Չփորձեմ նկարագրել, թե ով է **Անդրանիկը** հայոց համար, որովհետեւ, միեւնույնն է, ինչպիսի **Անդրանիկ** էլ որ պատկերեն, յուրաքանչյուր հայի մտքում, սրտում ու հոգում կա ավելի կենդանի, ավելի պայծառ ու ավելի հզոր **Անդրանիկ:** Միայն, մեծ զորավարի ծննդյան տարեդարձի առթիվ, կրկնեմ յոթ տարի առաջ Ջորավարի ծննդյան 150-ամյա հոբելյանին նվիրված մեր հրապարակման մեջ արված առաջարկությունը: Մեզանում կա ավանդույթ, հատկապես՝ համապատասխան եկեղեցական տոների օրերին, սրբազան մատուցված դուրս բերել **Մայր Աթոռի** զանգատներից կամ **Մատենադարանից**, դնել եկեղեցիներում կամ այլ սրահներում՝ հրապարակային ներկայացման եւ հաղորդակցման համար: Գիշտ այդպես էլ, յուրաքանչյուր տարի՝ Ջորավարի ծննդյան օրը, կարելի է **Անդրանիկի** թրերը դուրս բերել թանգարաններից, տեղափոխել զորամասից զորամաս, ցուցադրել, հնարավորություն տալ Հայոց բանակի զինվորներին՝ հավելու, հաղորդակցվելու այդ մատուցված գուգահեռ կազմակերպելով երդման արարողություններ կամ այլ միջոցառումներ: Կարելի է նաեւ **Անդրանիկի** հանրահայտ թրերի կրկնօրինակներով պարգևատրել ծառայության մեջ աչքի ընկած սպաներին: Կարծում եմ՝ բարոյահոգեբանական զորեղ լիցքեր պարունակող նման ձեռնարկումները կլինեն բացառիկ խորհրդանշական. Ջորավարի թրերը կդադարեն միայն թանգարանային նմուշներ լինելուց եւ կշարունակեն ծառայել Հայրենիքին:

Համակարգ

Դադարեցվել են լիցենզիաները

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարար Վահրամ Դումանյանի հրամանով դադարեցվել է «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊԸ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով գործունեության լիցենզիաների գործողությունը:

Հրամանի համար հիմք են հանդիսացել լիցենզավորման կարգերով սահմանված լիցենզիայի պարտադիր պայմանների և պահանջների, մասնավորապես՝ պրոֆեսորադոստի և ասիստանտների, ուսումնական տարածքի, լաբորատորի և ուսումնամեթոդական ապահովման, ուսումնառատության և գործունեությունը կարգավորող օրենսդրության պահանջների, ինչպես նաև սովորողների՝ նախատեսվող սահմանային տեղերի թվի խախտումները:

Ըստ այդմ՝ ուժը կորցրած են ճանաչվել ՀՀ կրթության և գիտության նախարարի 2014 թվականի օգոստոսի 27-ի N 308-Ս/Ք հրամանի հիմքով տրված բակալավրի և մագիստրոսի լիցենզիաները:

Համաձայն ԿԳՄՍ նախարարի վերոնշյալ հրամանի՝ նախարարության լիցենզավորման գործակալությունը, Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության վարչությունը ստացել են հանձնարարական «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊԸ-ի բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերով սովորող ուսանողների հետագա ուսումնառությունը այլ ուսումնական հաստատություններում կազմակերպելու, սովորողների շահերն ու իրավունքները պաշտպանելու նպատակով քայլեր ձեռնարկելու վերաբերյալ:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարանում, համաձայն ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի նոյեմբերի 23-ի N 1875-Ս հրամանի, իրականացվել են ուսումնասիրություններ, որոնց արդյունքները քննարկվել են ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կրթական ծրագրերի լիցենզավորման հանձնաժողովի՝ փետրվարի 18-ի նիստում, և կայացվել է լիցենզիայի դադարեցման որոշումը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի մյուս հրամանով՝ կասեցվել է «Սուրբ Թերեզայի անվան բժշկական համալսարան» ՍՊԸ-ին ՀՀ կրթության և գիտության նախարարի 2003 թվականի մարտի 17-ի N 148-Ս/Ք հրամանով տրված միջին մասնագիտական կրթական ծրագրով գործունեության լիցենզիայի գործողությունը մինչև խախտման պատճառների վերացումը: Կասեցված որոշումը կայացվել է լիցենզավորման կարգերով սահմանված պարտադիր պայմանների և պահանջների խախտումների հիմքերով:

Կ. Մ.

Փոխգործակցության նոր ուղղություններ



ՀՀ-ում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավար Մարտինա Շմիդտը տեղեկացրել է, որ մարտի 2-ին Երևանում նախատեսվում է Հայաստան/ԵՄ Գործողությունների ծրագրի ղեկավար կոմիտեի նիստ՝ 2019-2022 թթ. ծրագրի իրականացման ընթացքը և արդյունքները, ինչպես նաև հաջորդ շրջափուլի՝ 2023-2026 թթ. ծրագրի առաջնահերթությունները քննարկելու և համագործակցության նոր ուղղություններ նախանշելու նպատակով:

Ի թիվս գոյություն ունեցող համագործակցության ուղղությունների Մարտինա Շմիդտը ներկայացրել է փոխգործակցության նոր ուղղություններ, որոնց շրջանակում, մասնավորապես, մեդիագրագի-

տության բարձրացման ուղղությամբ համատեղ ծրագրեր իրականացնելու հնարավորությունը:

Նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը կարեւորել է մեդիագրագիտության ռազմավարական ծրագրի մշակման աշխատանքները՝ տեղեկացնելով, որ հանրակրթության պետական չափորոշումներում ներառված է ժողովրդավարության և քաղաքացիական կարողունակությունների զարգացումը: Նա նշել է, որ ներկայում հանրային քննարկման է դրված «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը, և կարելի է քննարկել նշված փաստաթղթում ու դրա իրականա-

ցումն ապահովող գործողությունների ծրագրում մեդիագրագիտության բարձրացման ուղղությամբ աշխատանքները:

Իր տպավորությունները կիսելով Հայաստանի հարուստ մշակութային ժառանգության մասին՝ ՀՀ-ում Եվրոպայի խորհրդի գրասենյակի ղեկավարը նշել է, որ Հայաստանը ներկայում գտնվում է Եվրոպական մշակութային ուղիներից (European Cultural Routes) մեկի վրա, և ունի մի շարք այլ ուղիներում ներգրավվելու ներուժ: Այս համատեքստում Վահրամ Դումանյանը նշել է, որ Հայաստանը մշակութային ժառանգության հետ կապված լուրջ խնդիրներ ունի թե՛ քարտեզագրման, և թե՛ հանրայնացման տեսանկյունից: Նա նաև ուշադրություն է հրավիրել Արցախյան երկրորդ պատերազմից հետո Արթրեջանի վերահսկողության տակ անցած տարածքներում հայկական մշակութային ժառանգությանը սպառնացող վտանգի հարցին:

Հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են նաև երկուստեք հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր:

Հ. ՅՈՒՆԿԵՍԻՍՏԱՆ

Ծրագրի նախագիծը քննարկվել է գործընկերների հետ

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծի հերթական քննարկումը տեղի է ունեցել զարգացման գործընկերների հետ: Այն կազմակերպել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարությունը՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի և Հայաստանում ԵՄ պատվիրակության հետ համագործակցությամբ:

Հանդիպմանը մասնակցել են ՀՀ-ում գործող դեսպանատների, միջազգային և դոմոր կազմակերպությունների, ինչպես նաև քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, որոնք տարբեր ծրագրեր են իրականացնում կրթության ոլորտում:

Քննարկման մասնակիցներին ողջունել է Հայաստանում ՅՈՒՆԵՍԿՕ-ի գրասենյակի ներկայացուցիչ Քրիսթինե Վայգանդը՝ նշելով, որ կազմակերպության գլխավոր առաջնահերթությունն է, որ բոլոր երեխաների համար հասանելի լինի որակյալ կրթությունը: Նա փաստել է, որ ԿԳՄՍ նախարարության ներկայացրած փաստաթղթում ամփոփվել են կրթության ոլորտի դրական և բացասական կողմերը, կատարվել է հսկայական վերլուծական աշխատանք, որն էլ հենց հանդիսանում է ծրագրի հիմքը: Քրիսթինե Վայգանդը վստահեցրել է, որ ծրագիրը լինելու է այն ընդհանուր տեսլականը, որն օգնելու է կրթության ոլորտում մինչև 2030 թվականը սահմանված նպատակներին հասնելուն:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհակալություն է հայտնել ներկայից ընդհանուր կրթության ոլորտի առաջնային փաստաթղթի հանրային քննարկմանը մասնակցելու համար:

«Հավատարիմ մնալով ՀՀ կառավարության որդեգրած մասնակցային ժողովրդավարության սկզբունքներին՝ մենք տարբեր ձևաչափերով կազմակերպում ենք հանրային քննարկումներ՝ քաղաքացիների և կրթության առաջնային շահառուների կարծիքները հավաքագրելու համար: Փաստաթուղթը միշտ էլ բարելավման կարիք ունի, հետևաբար կարևորում ենք հնչած բոլոր նկատառումները և, առանձնահատուկ, զարգացման գործընկերների կարծիքները: Փաստաթղթում ամրագրված առաջնահերթությունները կօգնեն, որպեսզի զարգացման գործընկերները մինչև 2030 թվականն ավելի մեծ ռեսուրսներ ուղղորդեն դրանց ուղղությամբ և շարունակեն երկխոսությունն ու արդյունավետ համագործակցությունը՝ նախանշված հավակնոտ թիրախներին հասնելու համար», - նշել է Արթուր Մարտիրոսյանը շնորհակալություն հայտնելով ՅՈՒՆԵՍԿՕ-ին և Հայաստանում ԵՄ պատվիրակությանը քննարկման կազմակերպման, ինչպես նաև ֆինանսական գնահատականի և այլ հարցերի շուրջ ցուցաբերած աջակցության համար:

Հայաստանում ԵՄ պատվիրակության համագործակցության բաժնի ղեկավար Ֆրանկ Յեսսն իր հերթին նշել է, որ փաստաթղթի նախագծում տրված է կրթության ոլորտի օբյեկտիվ գնահատականը՝ հույս հայտնելով, որ քննարկման ընթացքում կհնչեն արժեքավոր առաջարկներ:

Քննարկման կազմակերպիչների ողջունյի խոսքերից հետո ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը, Ժաննա Անդրեասյանը և Կարեն Թո-

չունյանը, ըստ իրենց համակարգման ուղղությունների, ներկայացրել են կրթության զարգացման ծրագրի ընդհանուր գործընթացը, ռազմավարական ուղղությունները և առաջնահերթությունների առանցքային դրոյթները, ինչպես նաև ժամանակացույցը:

Նրանք գոհունակություն են հայտնել փաստաթուղթը զարգացման գործընկերների հետ քննարկելու և նրանց արծազանքները լսելու վերաբերյալ, քանի որ ծրագրում առկա վերլուծությունները, իրավիճակի փոփոխումները և նպատակադրումները ոչ միայն ԿԳՄՍ նախարարության, այլև գործընկերների հետ տարիների համատեղ աշխատանքի արդյունք է:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է զարգացման ռազմավարության ընդհանուր գործընթացը և ժամանակացույցը, ժամանակահատվածում նախադրոցական, հանրակրթության, մախնական և միջին մասնագիտական, իսկ Կարեն Թոչունյանը բարձրագույն կրթության ոլորտներում մինչև 2030 թվականը վերին մակարդակի հիմնական որակական ցուցանիշները, ռազմավարության հիմնական թիրախները և սկզբունքները:

Բանախոսների զեկույցներից հետո ծավալվել է շահագրգիռ քննարկում, որի ընթացքում ներկայացրել են շնորհակալություն են հայտնել ԿԳՄՍ նախարարության ներկայացուցիչներին՝ նախագծի մասնակցային քննարկման համար և ընդգծել, որ ներկայացվել է բավականին առաջադեմ փաստաթուղթ: Նրանք հանդես են եկել մի շարք առաջարկներով և դի-

տարկումներով, ինչպես նաև հարցեր ուղղել ԿԳՄՍ նախարարի տեղակալներին: Հարցերը մասնավորապես վերաբերել են ազգային գնահատման ավելի ընդհանրական համակարգ ունենալուն, դպրոցների կառավարման նոր համակարգին, ուսուցիչների կարմատությունները, սոցիալական բաղադրիչի ներառմանը, որոշ առարկաների գծով ուսուցիչների պակասին, մանկավարժական կրթությանը, դպրոցներում քննադատական մտածողության զարգացմանը, սահմանամերձ համայնքների դպրոցներին, համընդհանուր ներառական կրթությանը, ազգային փոքրամասնությունների համար որակյալ կրթության ապահովմանը, ոչ ֆորմալ կրթության ձևերի հստակեցմանը, բարձրագույն կրթության միջազգայնացմանը և այլ խնդիրների:

Ամփոփելով քննարկումը՝ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը շնորհակալություն է հայտնել ներկայից արդյունավետ և կառուցողական քննարկման համար: Նա վստահեցրել է, որ հնչած բոլոր արժեքավոր առաջարկները և նկատառումներն անպայման հաշվի կառնվեն փաստաթղթի լրամշակման ընթացքում: Արթուր Մարտիրոսյանը ևս մեկ անգամ հիշեցրել է, որ ծրագիրը հրապարակված է իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական էլեկտրոնային հարթակում՝ բոլոր քաղաքացիներին և շահառու խմբերին հորդորելով ներկայացնել փաստաթղթի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու նկատառումները:

Հեղինակ՝ ՀՈՒՆԿԵՍԻՍՏԱՆ

Նախարարին կից հասարակական խորհրդի նիստում

Բարի լուր

Ամփոփվել է կրթության զարգացման պետական ծրագրի հանրային քննարկումների շարքը

«Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծի հանրային քննարկումների շարքն ամփոփվել է նախարարին կից հասարակական խորհրդի նիստում: Հանդիպումը վարել է խորհրդի նախագահ, ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը:



Ոլջուներով խորհրդի անդամներին Վահրամ Դումանյանը նշել է, որ 2015 թվականից ի վեր, տարբեր պատճառներով բացակայել է կրթության զարգացման ռազմավարությունը: Նրա խոսքով ներկայում շրջանառվում է ոլորտի կարելորագույն փաստաթուղթ, եւ նախարարությունն ակնկալում է լսել նոր գաղափարներ՝ նախագիծը բարելավելու նպատակով:

«Այսպիսի փաստաթղթերը հնարավոր չէ բերել իդեալական տեսքի եւ ունենալ բոլոր շահագրգիռ կողմերի փոխհամաձայնությունը, սակայն դա չի նշանակում, որ պետք է դրան չձգտել: Ծրագրում սահմանել ենք մինչև 2030 թվականը կրթության ոլորտի տեսլականը, թիրախները եւ հիմնական սկզբունքները, որոնք մեր գործընկերների հետ ցանկանում ենք իրականություն դարձնել: Նախագծի հիմքում դրված է երկու կարելորագույն սկզբունք. առաջին՝ յուրաքանչյուր ոք ունի թաքնված շնորհներ եւ տաղանդ, եւ լրջագույն խնդիր է դրանք բացահայտելը: Երկրորդ՝ մարդն իր ողջ կյանքի ընթացքում անցնում է որոշակի կրթական գործընթացի միջով՝ ֆորմալ եւ ոչ ֆորմալ, ու բոլոր այդ փուլերում կրթական որակը պետք է լինի հնարավորինս բարձր եւ մրցունակ, կառուցվի ազգային արժեքների հիման վրա՝ միաժամանակ լինելով համաարդկային արժեքների համահունչ, եւ այդ ամենը ի վերջո ծառայի մեր երկրին, ժողովրդին ու տնտեսության հզորացմանը»,- նշել է նախարար Վահրամ Դումանյանը:

թյունների առանցքային դրույթները, ինչպես նաեւ ժամանակացույցը: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը ներկայացրել է զարգացման ռազմավարության ընդհանուր գործընթացը եւ ժամանակացույցը, ժամանակահատվածում նախարարության, հանրակրթության, նախնական եւ միջին մասնագիտական, իսկ Կարեն Թռչունյանը՝ բարձրագույն կրթության ոլորտներում մինչև 2030 թվականը վերին մակարդակի հիմնական որակական ցուցանիշները, ռազմավարության հիմնական թիրախները եւ սկզբունքները:

Բանախոսների զեկույցներից հետո ծավալվել է շահագրգիռ քննարկում, որի ընթացքում ներկայացրել են ներկայացրել են իրենց դիտարկումներն ու առաջարկությունները՝ գոհունակությամբ փաստելով, որ իրականացվել է մեծ ծավալի աշխատանք: Նախարարին կից հասարակական խորհրդի անդամները մի շարք հարցեր են հղել զեկույցներին: Խորհրդի անդամներին, մասնավորապես, հետաքրքրել են հանրակրթության ոլորտում ֆինանսավորման մեխանիզմների, կրթություն-աշխատաշուկա կապի, ծրագրում մշակութային կրթության եւ ֆիզկուլտուրայի բաղադրիչի ներառման, ազգային փոքրամասնությունների՝ մայրենի լեզվով որակյալ կրթություն ստանալու, դպրոցների կառավարման խորհուրդների, բուհերի ծրագրային եւ ինստիտուցիոնալ հավատարմագրման, ԲՏԵՍ առարկաների գծով ուսուցիչների համալրման

խնդիրները: Խորհրդի անդամներին հետաքրքրել է նաեւ, թե արդյոք ծրագրի գործողությունների պլանում սահմանվել են հստակ ցուցանիշներ՝ նախագծում տեղ գտած հավակնոտ թիրախներին հասնելու համար: Ի պատասխան նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ օրենքն ուժի մեջ մտնելուց հետո՝ եռամսյա ժամկետում, ՀՀ կառավարությունը պետք է հաստատի «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» բխող գործողությունների ծրագիրը, եւ ռազմավարական ուղղություններով նախատեսվող քայլերը տեղ են գտնելու վերոնշյալ փաստաթղթում: Փոխնախարարը շեշտել է, որ նախագծով սահմանվել են հստակ չափելի արդյունքներ ինչպես 2030 թվականի, այնպես էլ միջանկյալ՝ 2026 թվականի համար:

Ամփոփելով նիստը՝ նախարար Վահրամ Դումանյանը շնորհակալություն է հայտնել ներկայներին շահագրգիռ եւ կառուցողական քննարկման համար՝ ընդգծելով, որ հնչեցված բոլոր առաջարկները կքննարկվեն եւ ըստ անհրաժեշտության տեղ կգտնեն նախագծում: Նիստի ավարտին ԿԳՄՍ նախարարին կից հասարակական խորհուրդը հավանության է արժանացրել «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագիծը:

Հեղինակ՝ ԶՈՎԱՆՆԻՍՅԱՆ

ՀՀ դպրոցականների նոր հաջողությունները

Ժառանգական միջազգային 18-րդ օլիմպիադային Հայաստանը ներկայացնող 37 մասնակիցներից 12-ն արժանացել են մեդալների՝ 1 ոսկե, 1 արծաթե եւ 10 բրոնզե:

Օլիմպիադան, որը կազմակերպվել է «Մաթեմատիկա», «Ֆիզիկա» եւ «Ինֆորմատիկա» առարկաներից, տեղի է ունեցել փետրվարի 15-23-ը, Ղազախստանի Ալմաթի քաղաքում: Օլիմպիադային մասնակցել են 22 երկրների 218 թիմերի 1210 դպրոցականներ, այդ թվում՝ 564-ը մաթեմատիկայից, 340-ը՝ ֆիզիկայից եւ 306-ը՝ ինֆորմատիկայից:

Ուրախալի է նշել, որ Հայաստանը ներկայացնող Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցին (16 աշակերտ) եւ Քվանտ վարժարանին (14 աշակերտ) այս տարի ավելացել են եւս երկու կրթօջախներ՝ ՀԱՊՀ ավագ դպրոցը (2 աշակերտ) եւ Գյումրու Ֆոտոն վարժարանը (5 աշակերտ): Օլիմպիադային առցանց ձևաչափով մասնակցել են Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի երկու, Քվանտ վարժարանի, ՀԱՊՀ ավագ դպրոցի եւ Գյումրու Ֆոտոն վարժարանի մեկական թիմեր: Ընդ որում՝ բոլոր դպրոցներն արժանացել են մեդալների (ֆիզմաթ դպրոց՝ 1 ոսկի, 1 արծաթ, 4 բրոնզ, Քվանտ վարժարան՝ 3 բրոնզ, ՀԱՊՀ ավագ դպրոց՝ 1 բրոնզ, Ֆոտոն վարժարան՝ 2 բրոնզ):

Ոսկե մեդալի է արժանացել Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Վահրամ Ասատրյանը՝ մաթեմատիկայից, իսկ արծաթե մեդալի՝ նույն դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Վահագն Հովհաննիսյանը՝ նույնպես մաթեմատիկայից:

- Բրոնզե մեդալների են արժանացել՝ Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի աշակերտներ Մարիա Առաքելյանը (11-րդ դասարան) եւ Վյաչեսլավ Պետրոսյանը (11-րդ դասարան)՝ ֆիզիկայից, Ծովակ Եգորյանը (9-րդ դասարան) եւ Տիգրան Սարգսյանը (11-րդ դասարան)՝ ինֆորմատիկայից, Քվանտ վարժարանի սաներ Համլետ Պետրոսյանը (11-րդ դասարան)՝ մաթեմատիկայից, Հայկ Աղայանը (11-րդ դասարան) եւ Գագիկ Գևորգյանը (9-րդ դասարան)՝ ինֆորմատիկայից, ՀԱՊՀ ավագ դպրոցի աշակերտ Արտաշես Մկրտչյանը (12-րդ դասարան)՝ ֆիզիկայից, Ֆոտոն վարժարանի սաներ Ժորա Ունուպոյլյանը (12-րդ դասարան) եւ Գեորգ Բոյաղչյանը (12-րդ դասարան)՝ ինֆորմատիկայից: Հիշեցնենք, որ արդեն 18 տարի շարունակ ՀՀ դպրոցների սաները մասնակցում են ժառանգական միջազգային օլիմպիադային եւ, որպես կանոն, արժանանում մեդալների: Գ. Հ.

Խմբակներ եւ նախագծային ուսուցում. ուժի մեջ է մտել նոր կարգը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար Վահրամ Դումանյանի՝ 2022 թվականի փետրվարի 18-ի 05-Լ հրամանով հաստատվել է «Հանրակրթական հիմնական, ընդհանուր եւ այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում ուսումնական խմբակների ձևավորման ու գործունեության եւ ուսումնական նախագծերի իրականացման կարգը»:

Կարգով սահմանվում է, որ ուսումնական խմբակներն իրականացվում են համաձայն հանրակրթության պետական չափորոշիչի, գիտության, արվեստի, զբոսաշրջության, հայրենագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, ֆիզիկական կուլտուրայի, սպորտի եւ այլ ոլորտների վերաբերյալ արտադասարանական ուսումնառության եւ ժամանցի կազմակերպման նպատակով: Խմբակներ կարող են ձևավորվել կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ, ինչպես նաեւ հաստատության տնօրենի հրամանով՝ մասնավորապես խորհրդի որոշմամբ կամ ծնողների առաջարկությամբ:

Կրթության պետական կառավարման լիազորված մարմնի որոշմամբ սահմանվում են առողջ ապրելակերպի խմբակներն ու մասնագիտական կողմնորոշման ակումբը:

Խմբակների վերահսկողությունն իրականացնում է դպրոցի տնօրենի՝ մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տեղակալը:

Խմբակը ձևավորվում է (տարիֆիկացվում է), եթե ծրագիրը հաստատվել է տնօրենի կողմից, եւ առնվազն 8 սովորող դրանում ընդգրկվելու ցանկություն է հայտնել:

Խմբակի ստեղծումը, ղեկավարի նշանակումը եւ սովորողների կազմը հաստատվում են դպրոցի տնօրենի հրամանով:

Խմբակի ծրագիրը կարող է լինել տիպային՝ մշակված ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության կողմից, եւ հեղինակային՝ մշակված որեւէ կազմակերպության կամ որոշակի խմբի կողմից: Ե՛վ տիպային, եւ հեղինակային ծրագրերը երաշխավորվում են նախարարության կողմից: Ծրագրում ներառվում են խմբակի նպատակը, խնդիրները, ակնկալվող վերջնարդյունքները, հատկացվող ընդհանուր ժամաքանակը եւ բովանդակությունը: Խմբակի ծրագիրը չի կարող կրկնել առարկայական չափորոշիչներով եւ ծրագրերով սահմանված բովանդակությունը:

Ուսումնական նախագծերն իրականացվում են 7-12-րդ դասարաններում:

Նախագիծը առանձին սովորողների կամ սովորողների փոքր խմբի կողմից որեւէ ուսումնական առարկայի կամ ուսումնասիրվող որեւէ երևույթի (օբյեկտի) վերաբերյալ իրականացվող առարկայական կամ միջառարկայական հետազոտական աշխատանքն է՝ նվիրված օրինա-

չափություններին, առանձնահատկությունների հետազոտությանը, արդյունքների ստացմանը եւ եզրակացությունների արձանագրմանը:

Նախագիծը կարող է իրականացվել ինչպես մեկ, այնպես էլ տարբեր ուսումնական առարկաներից եւ հետազոտության մեթոդների համադրմամբ: Նախագիծն իրականացվում է ուսուցչի կողմից մշակված, համապատասխան առարկայական մեթոդիկավորման կողմից հավանության արժանացած, տնօրենի կողմից հաստատված պլանի հիման վրա: Ուսումնական պլանի դպրոցական (ընտրովի) բաղադրիչից նախագծի իրականացման համար տրամադրվում է տարիֆիկացված ժամաքանակ: Միջառարկայական նախագծի դեպքում տարիֆիկացվում են բոլոր առարկաներից մասնակցող ուսուցիչներին տրվող ժամաքանակները՝ մասնակցության տեղողությանը համապատասխան: Նախագիծն ավարտելուց հետո աշակերտն այն պաշտպանում է նախագիծը ղեկավարած ուսուցչի մոտ, իսկ միջառարկայական նախագծերի դեպքում համապատասխան առարկաների ուսուցիչներից ձևավորված հանձնաժողովի մոտ:

Նախագծերի իրականացումը վերահսկում է դպրոցի տնօրենի՝ ուսումնական աշխատանքի գծով տեղակալը:

4. ՍԱՆՈՒԿՅԱՆ

Արցախ

Կրթության զարգացման պետական ծրագիր

Մայր բուհի հաշվետու տարին

Կայացել է Արցախի մայր բուհի խորհրդի նիստը՝ ռեկտորի տարեկան հաշվետվության և խորհրդի նախագահի ընտրության օրակարգային հարցերով: Ռեկտոր Արմեն Սարգսյանը ըստ բնագավառների ներկայացրել է 2020-2021 ուստարում կատարած աշխատանքները՝ կրթական, գիտական, միջազգային համագործակցության, ուսանողների հետ տարվող աշխատանքների, ֆինանսատնտեսական ուղղություններով:

2020-ը լի էր ծանր փորձություններով նաեւ կրթական համակարգի համար: 44-օրյա պատերազմն իր արհավիրքով խոր ճգնաժամ էր առաջացրել բուհի աշխատանքների վերականգնման գործում: Համավարակի պարտադրած ոչ սովորական իրավիճակը պատերազմից հետո առավել արդյունավետ լուծումներ էր պահանջում: Հեռավար կրթության իրականացման համար, ըստ ռեկտորի, հաջողություն էր Google For Education էլեկտրոնային հարթակի ներդրումը:

«Հաշվետու տարում համալսարանը հաջողությամբ անցել է որակի արտաքին հավաստման գործընթացը և արժանացել ինստիտուցիոնալ հավատարման 4 տարի ժամկետով: Այն կազմակերպել և համակարգել է ՀՀ «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրանքը, 2021թ. մարտին», - որպես գլխավոր ձեռքբերում նշել է ռեկտորը: Կրթական գործունեության ուղղությամբ իրականացվել են մասնագիտական կրթական ծրագրերի վերլուծություն և արդիականացում, հաստատվել են նաեւ նորերը: Այդ ընթացքում ԱրԴՀ-ն մասնագետներ է պատրաստել բակալավրիատի 19 և մագիստրատուրայի 20 կրթական ծրագրերով՝ 5 ֆակուլտետի և 16 ամբիոնի միջոցով:

2020-2021 ուստարում բուհը բակալավրիատի 1960 ուսանող ուներ, 315 մագիստրանտ, 19 ասպիրանտ: Բուհում ուսանողների ներգրավվածությունը հետազոտական աշխատանքներում խթանելու համար ներդրվել է «Հետազոտության պլանավորում» առարկան:

Տարվա ընթացքում համալսարանի դասախոսների և ուսանողների մասնակցությամբ կազմակերպվել են առցանց գիտաժողովներ, ընթերցումներ, հրատարակվել է «ԱրԴՀ գիտական տեղեկագիր» հանդեսը: Համալսարանի դասախոսները հրատարակել են 113 գիտական աշխատանք, այդ թվում՝ 8 մենագրություն, 2 ուսումնական ձեռնարկ, 1 ուսումնամեթոդական ձեռնարկ, 102 հոդված՝ նշել է ռեկտոր Ա.Սարգսյանը:

Ուշադրության է արժանի ԱրԴՀ-ի գիտխորհրդի որոշմամբ հիմնադրված «Արցախի ժողովրդագիտությունը» մատենաշարը, որի 4 հատորները հրատարակվել են հաշվետու ժամանակաշրջանում:

Անդրադառնալով միջբուհական համագործակցության ընդլայնվող շրջանակներին, ռեկտորը նշել է, որ առաջօր ԱրԴՀ-ն համագործակցության պայմանագրեր ունի ՀՀ, ԱՀ և արտերկրի շուրջ 50 բուհերի, գիտական և այլ կառույցների հետ:

Համալսարանի գործունեության առանցքը եղել են ունում է ուսանողների հանդեպ պատասխանատվությունը: 44-օրյա պատերազմում համալսարանի 26 ուսանողներ անմահացել են՝ իրենց կյանքի գնով մեզ ապրելու հնարավորություն տալով: Հետպատերազմյան շրջանում բուհի ղեկավարությունը զգալի ջանքեր է գործադրել համալսարանական գործունեությունը բնականոն հուն վերադարձնելու ուղղությամբ: Այս առումով հատկանշական են ուսանողների հետ տարվող աշխատանքները՝ տարաբնույթ միջոցառումների հարթակում: Անհրաժեշտ միջոցներ են ձեռնարկվել առավել կարիքավոր ուսանողներին և աշխատակիցներին նյութական աջակցություն ցույց տալու ուղղությամբ:

Ռեկտորի հաշվետվությունը գնահատվել է բավարար: Խորհրդի նիստին համալսարանի հաշվապահական հաշվառման բաժնի պետ Նարինե Գրիգորյանը ներկայացրել է ֆինանսական տարվա արդյունքները, հաստատվել է 2022-ի ծախսերի նախահաշիվը: Տեղեկացնելով, որ ԱրԴՀ-ի խորհրդի նախագահ է ընտրվել ԱՀ պետնախարար Արտակ Բեգլարյանը: Այլ հարցերում նիստը քննարկել է բարձրագույն կրթության զարգացմանը, բնագավառում առկա խնդիրներին և դրանց լուծման ուղիներին վերաբերող հարցեր:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից

Նախագծի հանրային ներկայացումը

«Թուն» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնում տեղի է ունեցել «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագրի» նախագծի հանրային ներկայացումը, որը կազմակերպվել էր ՀՀ ԿԳՄՍ նախարարության, «Դասականի», Հայաստան» կրթական հիմնադրամի և «Թուն» կենտրոնի հետ համագործակցությամբ:

Հանդիպման ընթացքում ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներ Արթուր Մարտիրոսյանը, Ժաննա Անդրեասյանը և Կարեն Թռչունյանը ներկայացրել են կրթության զարգացման ծրագրի ընդհանուր գործընթացը, ռազմավարական ուղղությունները և առաջնահերթությունների առանցքային դրույթները, ինչպես նաև ժամանակացույցը:



ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ներկայացնելով ծրագրի նախագիծը, նշել է, որ դրա կենտրոնում մարդն է, իսկ նրա կարողությունների ընդլայնումը՝ մարդկային կապիտալը զարգացնելու և իրացնելու միջոց: «Ծրագրի տեսլականի հիմքում Հայաստանի մինչև 2050 թվականը վերափոխման ռազմավարությունն է, և հատկապես 1-ին մեզանպատակը՝ կիրթ և կարողունակ քաղաքացի ունենալը: Ծրագրով սահմանվել են ՀՀ կրթության ոլորտի զարգացման գերակայությունները, ռազմավարության սկզբունքները և թիրախները, ինչպես նաև ծրագրային ուղղությունները և ակնկալվող վերջնարդյունքները», - նշել է փոխնախարարը՝ ընդգծելով, որ ծրագրի ռազմավարական ուղղություններն են՝ համընդհանուր ներառական սովորողական կրթական միջավայրի ստեղծում, կրթության արդյունավետության բարձրացում և կրթական ծառայությունների և արտադրանքի միջազգայնացում ու արտահանում:

Արթուր Մարտիրոսյանը նաև ներկայացրել է ծրագրի առավելությունները՝ նախորդ 2011-2015 թվականների պետական ծրագրի համեմատ: Մասնավորապես ներառում է հստակ արդյունքային շրջանակ և քայլերի հաջողակացումներ, ավելի գործուն մեխանիզմներ՝ առաջընթացի միջանկյալ և վերջնական արդյունքները գնահատելու և վերահսկելի դարձնելու ուղղությամբ, ծրագիրն ապահովող միջոցառումների ֆինանսական գնահատական անկախ փորձագետների կողմից, ֆինանսավորման աղբյուրների բազմաօրինակացում, ինչպես նաև հավակնոտ և առաջանցիկ նպատակադրումներ:

Հանրակրթության ոլորտի ռազմավարական ուղղությունները և առաջնահերթություններին առանցքային դրույթները ներկայացրել է նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը: Նրա խոսքով՝ նախադրոցական կրթության ոլորտում 2030 թվականի վերին մակարդակի հիմնական որակական ցու-

ցանիչ է սահմանվել, որ բոլոր երեխաներն ունենան հավասար հասանելիություն նախադրոցական կրթության և զարգացման որակյալ ծառայություններին: Որպես ռազմավարության հիմնական թիրախներ՝ նախարարի տեղակալը ներկայացրել է չափորոշիչ, ծառայությունների մատուցման, ֆիզիկական ենթակառուցվածքների և ֆինանսավորման մոդելի վերաբերյալ ծրագրում տեղ գտած դրույթները:

Ժաննա Անդրեասյանը ներկայացրել է նաև ոլորտի հիմնական սկզբունքները, այն է՝ քաղաքային բնակավայրերում խրախուսել մասնավոր մակապարտեզների առկայությունը՝ լիցենզավորման և վերահսկողության պատշաճ գործիքներով, գյուղական համայնքներում ստեղծել կրթահամալիրներ դպրոցական ծա-

կարդակի հիմնական որակական ցուցանիշ է սահմանվել աշխատաշուկայի պահանջներին համապատասխանող մրցունակ կադրերի պատրաստումը: Նախատեսվում է, որ ուսումնառությունն ավարտելուց հետո իր մասնագիտությամբ աշխատանքի կանցնի քոլեջների և ուսումնարանների շրջանավարտների առավելակ 90%-ը:

Նախարարի տեղակալը ներկայացրել է նաև ոլորտի հիմնական սկզբունքները, այն է՝ հաստատությունների դասակարգում՝ ըստ հանրապետական և լոկալ նշանակության, հանրապետական նշանակության հաստատությունների կառավարման և ֆինանսավորման առանձնացված տրամաբանության ներդրում, մասնավորի հետ համատեղ կառավարման տարբեր մոդելների ներդրում՝ աշխատանքի վրա հիմնված ուսուցման հիմքով, ինչպես նաև մասնագիտությունների ցանցերի ներդրում, արագ և ճկուն որակավորում նախատեսող մեխանիզմների ներդրում, այդ թվում՝ ոչ ֆորմալ կրթության արդյունքում միկրո որակավորումների ճանաչման միջոցով:

Բարձրագույն կրթության ոլորտի ռազմավարական ուղղությունները և առաջնահերթությունների առանցքային դրույթները ներկայացրել է նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը: Նրա խոսքով՝ որպես 2030 թվականի վերին մակարդակի հիմնական որակական ցուցանիշներ են սահմանվել՝ լավագույն 500 բուհերի ցանկում ունենալ առավելակ 4 բուհ և բարձրագույն կրթության ոլորտում, ըստ մասնագիտության, աշխատանքի անցնի շրջանավարտների առավելակ 90%-ը:

Որպես ոլորտի հիմնական սկզբունքներ՝ փոխնախարարը մատնանշել է պետական և ոչ պետական բուհերի մրցակցային մույն դաշտում գործունեություն, մասնավորի հետ համատեղ կրթական ծրագրերի ներդրում և կադրերի պատրաստում, ՀՀ որակավորումների ազգային շրջանակի հետագա կատարելագործում և ամբողջական ներդրում ապահովելով դրա համադրելիությունը եվրոպական որակավորումների համապարփակ շրջանակի հետ, ուսումնական ծրագրերի արդիականացում, ինչպես նաև ՀՀ բարձրագույն կրթական համակարգի միջազգայնացում օտարերկրյա ուսանողների ներգրավման, շարժունության զարգացման և միջազգային որակավորման միջոցով:

Բանախոսների զեկույցներից հետո կրթության զարգացման պետական ծրագրի յուրաքանչյուր ուղղության ներկայացումն ուղեկցվել է քննարկմամբ, որը մոդերացրել է «Դասականի», Հայաստան» կրթական հիմնադրամի արտաքին կապերի գծով տնօրեն Ալեքսանդր Հակոբյանը: Հանդիպման մասնակիցները հնարավորություն են ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալներին հղելու իրենց հուզող հարցերը, որոնք, մասնավորապես, վերաբերել են ներառական կրթության հասանելիությանը, գյուղական համայնքների դպրոցների գործունեությանը, ՄԿՈՒ հաստատությունների դասավանդողների որակավորման բարձրացմանը, կրթություն-աշխատաշուկա կապի ամրապնդմանը, մանկավարժական կրթությանը, առցանց կրթական ծրագրերին և այլն:

Քննարկումն ավարտվել է նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, որը շնորհակալություն է հայտնել կազմակերպիչներին և ներկաներին արդյունավետ և կառուցողական քննարկման համար:

Հեղինակ՝ ՅՈՒՂԱՆՆԻՍՅԱՆ



Ագրարային համալսարան

Բացվել է գարեջրագործության ուսումնափորձարարական լաբորատորիա

Հայաստանի ազգային ագրարային համալսարանում բացվել է գարեջրագործության եւ թորման ուսումնափորձարարական լաբորատորիա:

Միջոցառմանը ներկա են եղել ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, նախարարի տեղակալ Կարեն Թռչունյանը, ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը, բուհի դասախոսներ, ներկա եւ նախկին ուսանողներ, բարերարներ:

Բացման խոսքում նախարար Վահրամ Դումանյանը շեշտել է, որ ագրարային կրթությունը, որի առաջամարտիկը Հայաստանի ազգային ագրարային համալսարանն է, մեր պետության համար ռազմավարական նշանակություն ունի: «Իմ ցանկությունն է, որ մեր երիտասարդները հավատով եւ վստահությամբ նախապատվություն տան ագրարային կրթությանը եւ ընտրելով այդ ուղղության մասնագիտությունները՝ լրջորեն զբաղվեն ագրարային ոլորտի զարգացմամբ»,- նշել է նախարարը՝ ավելացնելով, որ հնարավոր չէ պատկերացնել արդյունավետ ագրարային կրթություն՝ առանց արտադրության ընթացքը տեսնելու:

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի ռեկտոր Վարդան Ուռուտյանը նշել է, որ Գարեջրագործության եւ թորման ուսումնափորձարարական լաբորատորիան հիմնվել է Ագրարային համալսարանի երկարամյա գործընկեր «Երեւանի գարեջր» ՓԲԸ-ի եւ «ԱԳՔՄ Ֆեդերացիա» ՓԲԸ-ի աջակցությամբ: Ծրագրի շրջանակում կատարվել է լաբորատորիայի եւ կից տարածքի վերանորոգում եւ կահավորում, ձեռք են բերվել գարեջրի թորման հոսքագիծ, անհրաժեշտ սարքավորումներ ու գործիքներ: «Ուսումնական լաբորատորիայի բացումը սոցիալական գործընկերության եւ կորպորատիվ պատասխանատվության օրինակելի մոտեցում է, երբ մասնավոր ընկերությունները իրենց նպաստն են բերում ուսումնական միջավայրի ստեղծմանը: Լաբորատորիայի առկայությունը մրցունակ կրթության լավ



նախադրյալ է, միաժամանակ՝ ուսանողակներին կրթության արդյունավետ մոդել»,- նշել է բուհի ռեկտորը՝ ավելացնելով, որ նորաբաց լաբորատորիան, բացի ուսումնական եւ փորձարարական նշանակությունից, կօգտագործվի նաեւ գիտահետազոտական նպատակներով: Ընդհանրապես հայտնելով ծրագրի աջակից մասնավոր ընկերություններին՝ Վ. Ուռուտյանը համալսարանի անունից շնորհակալագրեր է հանձնել «Երեւանի գարեջր» եւ «ԱԳՔՄ Ֆեդերացիա» ընկերություններին, ինչպես նաեւ բուհի ուսումնական լաբորատորիայի ստեղծմանը նպաստած նախկին շրջանավարտներին: Նախարարը ռեկտորի ուղեկցությամբ ծանոթացել է նաեւ

Հացի, հրուշակեղենի եւ շոկոլադագործության ուսումնական լաբորատորիային: Նշենք, որ վերջին երեք տարիներին Հայաստանի ազգային ագրարային համալսարանում բացվել են նորարարական ուսումնափորձարարական, հետազոտական նշանակության ավելի քան 35 ենթակառուցվածքներ: Դրանք թվում են ֆարմբոտ ռոբոտային համակարգով օժտված «խելացի» ջերմատունը, Օրգանական գյուղատնտեսության, Սննդամթերքի որակի հսկման, Ընդհանուր քիմիայի լաբորատորիաները, Գնահատման եւ թեստավորման կենտրոնը, Անասնաբուժական կրթագիտական գերազանցության կենտրոնը, Ջրային եւ հողային ռեսուրսների կառավարման հետազոտական կենտրոնը, Կաթնամթերքի վարպետաց դպրոցը, Ագրոդրոնների լաբորատորիան, Գինու ուսումնագիտական կենտրոնը, որն արտադրում է «Սերունդ» գինին, ինչպես նաեւ Շիրակի, Միսիանի եւ Վանաձորի մասնաճյուղերում կաթի վերամշակման արտադրամասերը, ջերմատունը, հողի անալիզի լաբորատորիան եւ այլն:

Առաջիկայում նախատեսվում է շահագործման հանձնել Կենսատեխնոլոգիաների ինկուբատորը եւ Բնագիտական կենսաքիմիայի լաբորատորիան: Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Աշխարհի հետ

Միջազգային օլիմպիական Հայաստանում

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով ձեւավորվել է 2022 թվականին Հայաստանի Հանրապետությունում կայանալիք կենսաբանության միջազգային օլիմպիական աշխատանքների համակարգման խորհրդատվական հանձնաժողովը, եւ հաստատվել է դրա անհատական կազմը:

Հանձնաժողովի նախագահ է նշանակվել նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը: Հանձնաժողովի կազմում ընդգրկվել են ԿԳՄՍ նախարարության եւ Երեւանի պետական համալսարանի ներկայացուցիչները, ինչպես նաեւ «2022 թվականին Հայաստանում կայանալիք կենսաբանության միջազգային օլիմպիական» ծրագրի ղեկավարը: Համաձայն հրամանի՝ հանձնաժողովն առնվազն երկու շաբաթը մեկ, ըստ անհրաժեշտության, պետք է գումարի միստեր եւ դրա արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնի ԿԳՄՍ նախարարին:

Կենսաբանության միջազգային 33-րդ օլիմպիական կայանալու է հուլիս ամսին Երեւանում, նախատեսվում է շուրջ 80 երկրի ներկայացուցիչների մասնակցություն: Բացման եւ փակման արարողությունները տեղի են ունենալու Ա. Սպենդիարյանի անվան օպերային եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում, իսկ բուն օլիմպիական անցկացվելու է Կ. Դեմիրճյանի անվան մարզահամերգային համալիրում:

Կենսաբանության միջազգային օլիմպիականի կազմակերպիչ անդամները տարբեր երկրների ներկայացուցիչներ են, այդ թվում՝ Հայաստանից, Չեխիայից, Նիդեռլանդներից, Հունգարիայից, Բելգիայից, Ռուսաստանից, Ուկրաինայից:

Մասնագետի խորհուրդներ

Ինչպես ապահովել անվտանգ միջավայր համացանցում

Համացանցի տարածումն ու հասանելիությունը լիովին փոխել է մարդկության հաղորդակցության, պետական ու մասնավոր թվային ծառայությունների մատուցման, ինչպես նաեւ տեղեկատվության փոխանակման գործընթացները: 2021 թվականի մարտի դրությամբ՝ մարդկության 59.5 տոկոսը, այսինքն՝ 4.6 մլրդ մարդ արդեն միացել է համացանցին: Բազմաթիվ հանրային ծառայություններ, ֆինանսական գործարքներ, բժշկություն ու կրթություն, այսինքն՝ գրեթե ամեն ինչ հնարավոր է դարձել համացանցի միջոցով: Սա նշանակում է, որ նոր տեղեկատվական տիրույթի մաս են կազմել երկրի բնակչության բոլոր շերտերն ու տարբեր տարիքային խմբեր, այդ թվում՝ երեխաներն ու պատանիները:

Քեյնսնոն Աճախտ Պարզյանի հետ:

Վերջինիս խոսքով՝ ներկա դարաշրջանում երեխաներն ու դեռահասներն իրենց ժամանակի զգալի մասն անց են կացնում ավելի շատ համացանցում, քան խաղախրապարակում: «Ի տարբերություն խաղախրապարակի՝ համացանցում երեխաներն ու դեռահասները հիմնականում նավարկում են մենակ, առանց ծնողների վերահսկման, քանի որ այս նոր տիրույթում ծնողները նույնպես նորեկներ են ու լիարժեք ծանոթ չեն կանոններին: Համացանցում երեխաների նավարկումը բավականին անկանոն է. այն կարծես բաց միջավայր լինի, որը միանգամից հասանելիություն է տալիս դեպի ողջ աշխարհը: Այս պարագայում ի հայտ են գալիս նախագծված մեխանիզմներ, որոնք կարող ենք սոցիալական ճարտարագիտության հնարքներին դիմելով՝ մոլորության մեջ գցել օգտատերերին, մասնավորապես, երեխաներին ու պատանիներին եւ ստանալ տեղեկատվություն, գողանալ անձնական տվյալներ, իրականացնել հոգեբանական բռնություն եւ այլն»,- ասում է Աճախտը:

Այլ, այլ նաեւ իրական կյանքում ու կարող են վտանգավոր լինել: Այդ իսկ պատճառով անհրաժեշտություն է առաջանում թվային մոր միջավայրում ի հայտ եկող վտանգներն ուսումնասիրել ու ծանոթացնել-կրթել բոլորին: Աճախտը վստահեցնում է այս գործընթացները մտահոգիչ են ոչ միայն Հայաստանի, այլ ամբողջ աշխարհի համար:

«Թվային կրթությունը եւ կրթնաձևավորության տեղեկատվական արշավներն ամբողջ աշխարհում կարեւորագույն կրթական բաղադրիչներ են: Համապատասխան կրթություն անհրաժեշտ է ստանալ նաեւ կրթնտիրություն ակադեմիկ նավարկելու համար, ինչպես, օրինակ, դա արվում է երթեկության կանոնների պարագայում»,- շեշտում է կրթնաձևավորության եւ թվային մասնագետ քաղաքականության մասնագետը:

Աճախտի խոսքով՝ 2019 եւ 2020 թթ. մի շարք գործընկերների աջակցությամբ կազմակերպվել են «Կրթնաձևավոր Հայաստան» տեղեկատվական արշավներ, որոնցից առաջինը նախագծվել է երեխաների, պատանիների, նրանց ծնողների ու ուսուցիչների, իսկ երկրորդը ավագ դպրոցի աշակերտների եւ ուսանողների համար: Արշավների ընթացքում ներկայացվող տեղեկատվությունը հետագայում ներառվել է Հայկական կրթական միջավայրի պաշտոնի շտեմարանում, իսկ արշավի մասին տեղեկատվությունը հասանելի դարձել ինչպես Հայաստանում, այնպես էլ ՀՀ-ից դուրս:

«Կրթնաձևավոր Հայաստան» ֆեյսբուքյան էջում պարբերաբար նոր կանոններ ու տեղեկատվություն է հրապարակվում, որը, անշուշտ, հետաքրքրություն է առաջացնում եւ շատ կարեւոր է տեղեկացված հասարակություն ունենալու համար: Ընդհանուր առմամբ՝ կրթնտիրություն վտանգները տարբեր են ու բազմազան, սակայն ամենատարածված վտանգներից խուսափելու համար անհրաժեշտ է իմանալ մի շարք կանոններ: Մասնավորապես պետք է պահպանել կրթնտիրության, որի հիմնական նպատակն է էլեկտրոնային կրիչների մաքրումը եւ պաշտպանությունը հնարավոր վիրուսային ծրագրերից»,- փաստում է Աճախտը:

Հաջորդ կանոնը, ըստ մեր գրուցակցի, անձնական տվյալների պաշտպանությունն է, որի հիմքում անձին նույնականացնող տվյալների պաշտպանությունն է՝ այլոց փոխանցելու, տարածելու եւ կիսվելու գործողություններից, որի պատճառով մարդը կարող է ենթարկվել տարատեսակ կիբեռհարձակումների, կրել հոգեբանական ճնշումներ, ունենալ կորուստներ, այդ թվում՝ ֆինանսական եւ այլն:

«Տարաբնույթ վտանգներից խուսափելու համար անհարժեշտ է իմանալ նաեւ մյուս կանոնի՝ սոցիալական ճարտարագիտության մասին, որի հիմքում տարբեր մեխանիզմներով օգտատերերին մանիպուլյացիաների ենթարկելն է, բազմապիսի թակարդների մեջ գցելը՝ անձնական տվյալների, նյութերի կամ տեղեկատվության հափշտակման նպատակով: Այս առնչությամբ հարկ է նշել, որ չնայած բոլոր բարդություններին, այնուամենայնիվ, համացանցը աներեւակալելի հնարավորություններ է ընձեռում կրթվելու, աշխարհը ճանաչելու, մարդկանց, բնությունն ու տիեզերքն ուսումնասիրելու համար: Ուղղակի պետք է համացանցում սովորեցնել երեխաներին լինել նույնքան կիրթ, ազնիվ ու արարող, որքան իրական աշխարհում»,- ասում է Աճախտը եւ հավելում, որ համացանցում անհրաժեշտ է ձեւավորել նաեւ դրական թվային հետք, որը ենթադրում է մարդկությանը օգտակար, կիրառելի դրական բովանդակության կերտում եւ տարածում:

Հ. ՅՈՒՐԿԱՆՆԻՍՅԱՆ

Անդրանիկը եւ Թումանյանը

Հրաչիկ Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը» գրքից

1916 թվականի մարտի 25-ին Անդրանիկը թիֆլիսում էր: Կովկասի կենտրոնը հանդիսացող այս քաղաքը արեւելահայ հոգեմտավոր մայրաքաղաքն էր եւ հասարակական-քաղաքական խմորումների օջախը: Այստեղ էին հավաքվել մեր ազգի մեծերը, այդ թվում՝ զորավարի շատ սիրելի Հովհաննես Թումանյանը: Սեփական ժողովրդի մեծ ողբերգության վշտից մի քանի ամսում ծերացած Ամենայն հայոց բանաստեղծը դարձել էր քաջախոս: Փոխվել էր նաեւ Անդրանիկը: Նա թիֆլիս էր վերադարձել կոտորված սրտով, տխուր ու ջղագրգիռ: Խուսափում էր զրույցի բռնվելուց, աշխատում էր մեռնակ մնալ:


Սակայն թիֆլիսում անկարելի էր մեկուսանալ: Անգամ պատերազմի արհավիրքներն անկարող էին մարդկանց մեջ սպանելու կենսուրախությունը, լավատեսությունն ու կատակները: Կյանքը շարունակվում էր, եւ եթե չլինեին հազարավոր արեւմտահայ զոհակազմերը, ապա կթվար, թե այնտեղ ոչինչ չէր փոխվել: Թիֆլիսյան մթնոլորտը Անդրանիկին

աստիճանաբար դուրս բերեց հոգեկան ծանր վիճակից. նա դարձավ Թումանյանի հետ էր:

Որքա՞ն անքուն գիշերներ են նրանք միասին անցկացրել, որքա՞ն քաղցր զրույցներ են ունեցել: Թումանյանն ինքը, լինելով շնորհաշատ պատմող, մեծագույն բավականությամբ էր լսում Անդրանիկին, հիանում նրա մտքի պարզությամբ, երեւութների մեջ թափանցելու ակնառու շնորհով, անկոտրում կամքով ու հերոսականությամբ: Բանաստեղծի համար Անդրանիկը դուրսգաղանկան կերպար էր, կենդանի առասպել: Ականատեսները հետաքրքիր հուշեր են թողել հերոսի՝ թիֆլիսյան այդ շրջանի առօրյայից:

Թումանյանի դուստրը՝ Նվարդը, պատմում էր, թե Անդրանիկն ու իր հայրը ինչպիսի հաճելի պահեր էին պարգևում միմյանց: «Հայրիկը Աղայանից հետո մտերիմ ընկեր, կարելի է ասել, չունեցավ: Անդրանիկը, ըստ էության, բանաստեղծի ամենամոտ մարդն էր», - գրել է Նվարդ Թումանյանը:

Երկու մեծերի ջերմ բարեկամության մի քանի դրվագների իր



հուշերում անդրադաձել է մեր գրականության լուսավոր դեմքերից մեկը՝ Վահան Թոթովենցը (ով զորավար Անդրանիկի մտերիմներից էր, նրա թիկնապահ-թարգմանիչը, իսկ 1917-1918 թվականներին թիֆլիսում խմբագրել էր զորավարի հրատարակած «Հայաստան» թերթը): «Երկար խոսում էին այս երկուսը իրար հետ, բազմաթիվ անեկդոտներ, բարբեր, սովորություններ, ասացվածք-



ներ, առակներ, հեքիաթներ էին իրար հաղորդում, մեկը՝ Լոռուց, մյուսը՝ Սասունից: Ի վերջո նրանք եկան այն եզրակացության, որ լռեցիները սասունցիներ են եղել...»: Սեկ այլ դրվագ. «Մի օր մենք ներս մտանք այն պահին, երբ Անդրանիկը պատմում էր ինչ-որ կռվի պատմություն: Թումանյանը կանգնած էր, մի ոտը դրած թախտի վրա, թեւերը բարձրացրած վեր, փայլուն,

արծարծուն աչքերով լսում էր:

- Թուրք քաշեցի...,- ասաց Անդրանիկը եւ կանգ առավ: Նա ուներ այդպիսի սովորություն...- ժամանակ էր տալիս, որ լսողն ընդգրկի պահը:

Բայց Թումանյանը չհամբերեց եւ սկսեց գոռալ.

- Խփիր, խփիր»:


... «Մի օր էլ էլի սեղանի շուրջը Թումանյանն առաջարկեց խմել Անդրանիկի կենացը եւ ինքը վերցրեց առաջին խոսքը:

- Սրանից քսան տարի առաջ, - ասաց Թումանյանը, - կար երկու նշանավոր բան՝ Խրիմյան Հայրիկը եւ իմ «Շունն ու կատուն»: Քսան տարի է անցել, բայց էլի երկու նշանավոր բան կա. իմ «Շունն ու կատուն» եւ Անդրանիկը. խմում են երկու նշանավորներից մեկի՝ Անդրանիկի կենացը:

Բոլորն էլ սկսեցին ծիծաղել: Անդրանիկն էլ ծիծաղեց: Անդրանիկը Թումանյանին պատասխանեց.

- Կանցնեն տարիներ, ոչ ես կլինեմ, ոչ էլ Թումանյանը, բայց կլինի մի նշանավոր բան՝ «Շունն ու կատուն». խմենք նրա կենացը»:

Խոսում, մտածում, պահանջում է Անդրանիկը



Տարիներ է վեր հայ զինվորը բարձր բռնեց իր անունը եւ պատիվը: Սասունեն սկսյալ մինչեւ Պալքանյան պատերազմը եւ անկե մինչեւ Ջանկեզուր, Սիսյան, Խափան ու Ջապուխ, Հեքերիու գետերը Կովկասի ճակատին վրա ձեր մարտնչումները աշխարհի հիացուցիկ: Ֆերիք, Ալի, Յավեր, Ալիհիսան, Խելիլ, Վեհիպ եւ Նուրի փաշաները եւ անոնց ամենահետին զինվորներն իսկ տեսան ու ճաշակեցին ձեր մարտնչումները...

Տխուր պահս՝
1907-ին, երբ Գեւորգին (Գեւորգ Չավուշին) մահվան լուրը հասավ ինձի:

Ուրախ պահս՝
1904-ին, երբ Սշո դաշտին մեջ Սբ. Հովհաննեսի վանքին տակ գտնված գոմերու կռիվը կը մղեի տասնեյոթը զինվորներու հետ 1800 թուրք եւ քուրդ ուժերուն դեմ (1500-ը կանոնավոր զինվորներ էին):

Այս կռվին մեջ մեզի հետ էին երկու հայ կիներ, որոնք դիրքեր կը շինեին մեզ համար եւ Խաս գյուղացի տեր Քերովբե բեյն, որ զենքը ձեռքին կը կռվեր թշնամիին դեմ:

Երբ երկաթե կամքով եւ մաքուր հայրենասիրությամբ այս փոքրիկ խումբը կը կռվեր, հաղթանակը շահելով, այդ պահը իմ ամենաուրախ օրն էր:

Մարդ ոչ հերոս, ոչ ալ կռվող կծնի, զենքն է, որ մարդուն կռվելու ընդունակություն կու տա եւ դիմադրության ոգի կը ստեղծե անոր մեջ:

Ոչ թուրքական հրացանները, ոչ ցուրտն ու քամին կրնային սարսափեցնել եւ մարել կրակը մեր սրտեն, երբ դեռ երեկ արցունքի եւ վրեժի սեռ սիրելի Ղազարը թաղեցինք: Պետք է սպաննել, սպաննել շարունակ, լուծելու համար վրեժը ամեն անոնց, որոնք ինկած էին: Տարափի պես տեղացող հազարավոր զնդակներ կը սուլեին, կ'անցնեին մեր գլուխներուն քովեն, մեր ոտքերուն առջեւեն, բայց վանքը հոն էր, տիրական եւ հզոր: Մենք երբեք չթերացանք, երբեք չընկ-



ճեցանք, այլ մեր խիզախ կեցվածքով թշնամիին թուլցած եւ վիատած բազուկներուն հուսալքում պատճառեցինք, զոհեր խլելով:

«Մարտական հրահանգներ», 1906

Սիրելի Հովհաննեսս,
Ես հրճվանքով կարդացի նամակդ: Հասած է ժամը, որ բոլորը նմանին քեզի, տրամադրելի ընելով իրենց զավակները ու դրանը հայրենիքի պաշտպանության գործին: Պետք է մոռնանք պահ մը, գրիչը փոխարինելով սուրին, ստեղծելու համար հայրենիքը, որուն խաղաղ ծոցին մեջ միայն կծաղկի գեղարվեստի կյանքը:

Ես շատ զգացված եմ քու բարձր տրամադրությունդ եւ կը հուսամ, որ մեր բովանդակ մտավորականությունը կը հետեւի քու օրինակին եւ այսպիսով կը դարբենեք մեր սրբազան ազատությունը:

Քույր՝ Անդրանիկ

«Հայաստան», թիվ 183
23.12.1907 թ., Թիֆլիս

Լեւոն, տպարանս կը փոխադրինք Հայաստան, Առաքելոց վանքը, կ'ուզեմ հոն մեռնիլ եւ թողվիլ Թարգմանիչներու գերեզմաններուն ոտքը, ոչ որպես անոնց քով պառկելու արժանիքով մեկը, այլ որպես պահակ զինվոր մը այդ մեծ մարդկանց, որված այն ազգին կողմը, որ անոնց վառած ջահին շնորհիվ դարերով պահած է ինքզինքը:

Ուղղված է 1917-ին Թիֆլիսի իր հրատարակած «Հայաստան» թերթի խմբագիրներից Լեւոն Թուրունջյանին

Կուզեմ, որ իմ աճյուններս հանգչին Արաքսի կամ Ջանգուի ափին, իմ սիրելի ժողովուրդիս մեջ, որուն ազատության համար կռվեցա:

Եթե այս անգամ ցավը զիս տանի, մարմինս օտար հողի վրա չթողու... անպայ-

ման Հայաստան փոխադրեք: Եթե կարելի չըլլա փախազա իրագործել, մարմինս Վառնա տարեք եւ թաղեք քրոջս՝ Նազելիի գերեզմանի քով:

Երբ մեռնեմ, ինձ կթաղեք Առաքելոց վանքի դռների առջեւը, ուր կզան աղոթելու ու մոմեր վառելու, իսկ ես նրանց սուրբ հողի տակ կլինեմ, կլսեմ անոնց ոտքերու ձայները:

- Անդրանիկ ջան, քեզի պես զենքով չեմ կռվել, բայց ինչքան որ կը հասկնամ, երգն էլ զենքից պակաս չէ:

- Իհարկե, երբեմն ավելի գորեղ է: (Շերամի եւ Անդրանիկի միջեւ մի զրույցից):

Իլլիչ Բեգլարյան,
«Հայդուկներ», Երեւան, 2010

Եթե հայ ժողովուրդը կուզե ինձ պատիվ մը ընել, ես իմ արձանս չեմ ուզեր, փառավոր թաղում չեմ ուզեր, թող հայ ժողովուրդը կանգնեցնի ավերակ դարձած Առաքելոց վանքը եւ այնտեղ հիմնե փոքրիկ ուսումնարան մը հայ մանուկներու համար,- այս է իմ ամբողջ բաղձանքս եւ բարոյական պահանջս հայ ժողովուրդեն:

Ղարաբաղցիներ եւ գանձակցիներ, չհաջողեցանք մտնել ձեր պատմական երկիրը: Տարեք իմ ողջույններս ձեր քաջ ժողովրդին եւ իմ կողմեն ըսեք, որ երբեք գլուխ չծնեն մեր ցեղին ոսոխին առջեւ:

Այժմ մեր բազմաչարչար եւ հալածված հայ ժողովուրդը ունի իր հայրենիքը... Պետք է ուժ տալ Հայաստանի շինարարական ձեռնարկներուն եւ գորացնել զայն՝ իբրեւ մեր ապագա հույսերու խարիսխը...

Գեւորգ Ղարիբջանյան,
«Ժողովրդական հերոս Անդրանիկ», Երեւան, 1990

Անդրանիկ Օգանյանի մասին

Անդրանիկ, քաջ զավակ հայ ժողովուրդի, դուր՝ ազատության զինվոր, դուր՝ արդար բազուկ, դուր՝ պաշտպան հավատո եւ հայրենյաց, դուր մեր պատմության քարայրներեն լույս աշխարհ եկած նոր օրերու Միեր. ահավասիկ ես՝ Հայոց Հայրապետը, քեզի կուզամ Ա. Էջմիածնեն, հայոց աշխարհեն եւ քեզի ողջույն կը բերեն:

...Հայրենիքեն ափ մը հող եւ չբերի հետս գերեզմանիդ, վասնզի հոգիս կը վկայե, թե հեռու չէ այն օրը, երբ ինքը՝ հայրենի հողը իր կուրծքը պիտի բանա եւ ընդունի աճյուններդ, դուր հոն պիտի հանգչիս հավիտյան:

Ամենայն Հայոց կաթողիկոս Վազգեն Ա 1965 թ. փետրվարի 4, Փարիզ, Պեր Լաշեզ գերեզմանատուն

Կամավոր նահատակների մի ընտիր խումբ, որ պայքարի մտավ քառորդ դար առաջ, եւ որոնց շարքերից էր Անդրանիկը, նույնքան անձնագոհ էր, որքան սա: Նոր մարտական հայության առաջին ծիլերն էին, ամեն մեկը՝ ընտրված հազարի միջից, ամեն մեկը՝ մի գորավոր անհատ, բայց այդ ընտիրների եւ գորավորների մեջ աչքի ընկավ Անդրանիկը: Այդ փայլուն շարքն ունեցավ բազմաթիվ հետետրոհներ, որ իբր տիպար, իբր նոր տեսակը հայության՝ իրենց խորքով տարբեր էին նրանից, բայց նրանց շարքում միակն եղավ Անդրանիկը, որ ստացավ համազգային հերոսի հռչակ եւ անուն: Նույն էր բարոյական խորքը, բայց տարբեր էին խառնվածքն ու կարողությունները:

Անդրանիկը մեռավ իր փափագին չհասած, որ ազգին էր միանգամայն, բայց նա երկար ու անձնվիրաբար ծառայեց համազգային նպատակին, ուստի իր անունն ու հիշատակը դարձան համազգային:

Նիկոլ Աղբալյան

Խրիմյան Հայրիկեն ի վեր մեր նոր ժամանակներուն մեջ ոչ մեկ հայ չէ եղած, որ այնքան խորապես բնագործեն, անվերապահորեն սիրված ըլլա ամբողջ ժողովուրդեն, որքան Անդրանիկը: Անիկա բնութենն օժտված էր, ինչպես Հայրիկը, առնական ու միանգամայն հանկուցիչ գեղեցկությամբ մը եւ հոգիներուն վրա ազդելու, սիրտերուն տիրելու, ժողովուրդը մը իր հետեւեն քաշելու կարողությամբ:

Արշակ Չոպանյան, 21 սեպտեմբերի, 1927 թ.

Մայր բնությունից եւ բախտից պարզեւատրված բացառիկ անհատներից էր Անդրանիկը, եւ բացառիկ վիճակի արժանացավ նա հայոց պատմության մեջ: Եթե ժողովրդական կամ ազգային հերոս բառը որոշ իմաստ ունի, «Անդրանիկը եղավ բառիս ամենալայն մտքով ազգային հերոս, որի ճակատը դափնե պսակով զարդարեցին «Հայոց կուսանք», եւ հայ աշուղները փառքի երգեր ձոնեցին նրան:

Սիմոն Վրացյան

Հայ ազատագրական շարժման պատմության մեջ Անդրանիկը ամենավիպական, ամենափայլուն ռազմական դեմքն է, որ փոթորկեց հայ ժողովրդի հերոսատենջ հոգին: ... Ինչպես հրաբուխը ժայթքում է լեռան անդնդախոր արգանդից, այդպես էլ Անդրանիկը ժայթքեց հայ ժողովրդի սրտից՝ որպես վրիժառու ըմբոստության հոյակապ մարմնացում: Թշնամուն պատուհասող նրա սուրը հայրենի հողի վրա երբեք պատյան չմտավ: Անդրանիկ ռազմիկ էր ոտից գլուխ:

Վարդգես Ահարոնյան



Եթե Անդրանիկը ծնված լիներ հին հելլենական շրջանում, Հոմերոսը, վստահաբար, նրան նվիրված դյուցազնավեպ գրած կլիներ, ինչպես երգեց Աքիլլեսի սխրագործությունը: Նա, տակավին, սպասում է Ֆրանց Վերֆելի պես այն վիպասանին, որը կտավի վրա առնի Հայաստանի Արծվի հերոսական դեմքը, անվախ խոյանքն ու արդարակրող կոզին:

Անդրանիկ Փռլադյան

Հայերեն խոսել եւ չորսվեցա, մինչեւ որ մեծ մայրս մեր տունը եղավ ու ամեն առավոտ երգեց զինվոր Անդրանիկի մասին, եւ մինչ օրս եւ գիտցա, թե ան հայ մըն էր, լեռնական գեղջուկ մը, որ սեւաթույր ծի մը հեծած՝ ափ մը մարդոցով կը կռվեր թշնամիների դեմ...

Վիլյամ Սարոյան

Իմ սերունդը Անդրանիկի մասին շատ քիչ բան գիտի, չասելու համար՝ համարյա բան չգիտի: Սրա համար կարելի է ամոթից գետնը մտնել, որովհետեւ Անդրանիկի մասին բան չիմանալը հավասար է հայ ժողովրդի նորագույն պատմությանը անգետ լինելուն: Բայց ամոթից գետնը պիտի մտնենք ոչ թե մենք, որ մի ամբողջ սերունդ ենք, այլ նրանք, որոնց վզին է ընկնում մեր այս անգիտության բացատրելի, բայց անբավելի մեղքը...

Պարույր Սեւակ

Աշխարհում չկա մի հայ, որի սիրտը չթրթռա՝ արտասանելով այս պաշտելի անունը՝ Չորավար Անդրանիկ:

Չորավար Անդրանիկը հայ ժողովրդի ազգային հերոսն է: Նա մեր ժողովրդի պարծանքն է, մեր պատմության ամենաթանկագին գոհարներից մեկը: Այդ մասին լավ գիտեն Սովետական Հայաստանում ապրող հին սերնդի ներկայացուցիչները, բայց նոր սերունդը, դժբախտաբար, համարյա անտեղյակ է: Անդրանիկը մեր նոր սերնդի գիտակցության մեջ մի աղոտ, մշուշապատ եւ այլայլված կերպար է, որի նմանությունն իր իրականի հետ շատ հեռավոր է:

Չայնակցելով սիրելի Պարույր Սեւակին՝ ես կավելացնեմ, որ այդ «անբավելի մեղքի» «բացատրությունը» ոչ ոքի չի արդարացնի հետագա սերունդների առաջ եւ չի փրկի պատմության դատաստանից, եթե մենք այսօր չքավենք այդ:

...Չորավար Անդրանիկի կյանքն ու գործունեությունը մեր պատմության ամենափայլուն էջերից է, որը, սակայն, մեր քառասունամյա պատմության մեջ անարդարացիորեն անտեսվել է եւ գիտակցաբար խեղաթյուրվել: Ժամանակն է վերջ տալու այդ կեղծ գիտական, ավելի ճիշտ՝ հակագիտական եւ ապագիտական ուղղությանը, եւ գո-

րավար Անդրանիկի պատմական, քաղաքական, ազգային եւ հասարակական կերպարը վեր հանելու ըստ արժանվույն, առանց, սակայն, նոր աղավաղումների, այնպես, ինչպես որ եղել է Չորավար Անդրանիկ եւ կա հարազատ հայերի սրտում:

Հակոբ Անասյան

... Անդրանիկը Մասիսի գագաթի պես բարձր տիպարն է: Նա հայության տիպարն է դեմքով, հասակով, անվեհերությամբ, արիությամբ: Նրա հոգու շանթահար սլացքը, հավատի պողպատն ու դիմադրողականության բրոնզը, որպես սիմվոլ պիտի վերածվեն արձանի մը՝ ներքե գրված Անդրանիկ: Անոր դաշույնի վրա գրված էր.

«Մեղքը մերը չէ, եղբայր, անե՛ծք դու՜ մանին,

Նա պարզեց դորշը արյունոտ մարտին»:

Երեսուն տարվա մեջ ահեղ մարտերում թշնամու գնդակը իրեն չհասավ: Չորավար Անդրանիկը քաջ մոգական հմայք կամ դյուցազնական ազդեցություն ուներ իր թշնամիներու եւ դարանակալներու վրա: Անդրանիկի անանց նվիրվածությունը հայրենիքի ազատության պաշտամունքն էր, որ փառքի բոլոր դափնիների Լուսատու պսակը դրին անոր գլխին:

Կարապետ Սիտակ

Ես երբեք այլեւս չիանդիպեցա նման սքանչելի խումբ մը: Չարմանալի ներդաշնակություն մը եւ համերաշխություն մը կար անոնց մեջ, ավելի կարծես նահապետական մեծ ընտանիք մը, հարազատ եղբայրներ լինեին, հոգատար իրար հանդեպ, գուրգուրող եւ ուշադիր:

Անդրանիկ ամուն դարձել էր սիմվոլ մը կռվող Հայաստանի: Դժվար թե գտնվեր ամենահետ գյուղի մը երդիքը, որ չերզվեր Անդրանիկը, որ արդեն անձ մը չէր այլեւս, այլ ազգային, լեզենտական հերոս մը, բոլոր հերոսները մարմնավորող:

Մալխաս

Անդրանիկը՝ տեղանքի եւ թշնամու եւության գերազանց իմացությամբ, իր ռազմական փորձով ու խորհուրդներով իմ ջոկատում եղած ժամանակ բազմիցս մատուցել է անգնահատելի ծառայություններ: Ամսանք խենթորեն խիզախ մարդու նրա նշանաբանն էր՝ հարձակում: Բացի այդ, իր մեծ վստահությամբ Անդրանիկը գերազանցորեն ազդում էր անվարժ զանգվածի վրա եւ համառությամբ ու կամային ուժով կարգուկանոն պահպանում խմբում:

Թովմաս Նազարբեկյան

Մեծ է Անդրանիկի մասնակցությունը մասնավորապես օսմանյան բռնապետության դեմ մղված ազատագրական պայքարում:

Հայ ազատագրական պայքարն ուղղակի պատասխանն էր օսմանյան իշխանությունների կիրառած բռնությունների, կողոպուտների ու մեթոդիկ ցեղասպանության քաղաքականությանը Հայաստանում:

Հայ ժողովուրդը չէր կարող չգիմել զինված պայքարի իր ինքնապաշտպանության ու գոյատևման համար, հայրենիքի ազատագրման համար, ապագա սերունդների բախտի համար: Հայ ժողովրդի ազատագրական պայքարը, այսպիսով, իր բնույթով արդարացի առաջադիմական, հեղափոխական պայքար էր:

Այդ պայքարի ծնունդ էր նաեւ Անդրանիկը, նրա գլխավորած աշխարհագրորային շարժումը: Անդրանիկը բնածին տաղանդի տեր մարդ էր: Ժողովրդի խորքից դուրս եկած լինելով՝ նա ամբողջովին նվիրվել էր հայ ժողովրդի ազատագրության, հայկական պետականության վերստեղծման գա-

ղափարի իրականացման գործին:

Մենք հպարտանում ենք Անդրանիկով եւ անցյալի բազմաթիվ քաջ հայորդիներով: Հպարտ ենք նաեւ, որ Անդրանիկի կրծքում վառվող կրակը չմարեց, այլ ուժեղանալով՝ հայ զինվորներին վերջին աշխարհամարտում հայկական եւ խառը դիվիզիաների կազմում տարավ մինչեւ Բեռլին, որ այդ կրակը, հանձինս մարշալ Բաղդամյանի, նավատորմի ծովակալ Հովհաննես Իսակովի, օդային ուժերի մարշալ Սերգեյ Խամփերյանցի, գրահատանկային զորքերի մարշալ Համազասպ Բաբաջանյանի, ճանաչվեց բոլոր ժողովուրդների եւ ամբողջ ազատասեր մարդկության կողմից:

Վիկտոր Համբարձումյան

Մանկական եւ պատանեկան տարիներից եւ շատ եմ լսել Անդրանիկի ժողովրդական խիզախ տաղանդի, ժողովրդին նրա անսահման նվիրվածության եւ մեծ հայրենասերի բարձր հատկությունների մասին:

Հովհաննես Բաղդամյան

... Յուրաքանչյուրը, ով կարող է, պետք է գրի, պատմի, երգի Անդրանիկի մասին, որովհետեւ այդպիսի իսկական ազգային հերոսներն աշխարհ են գալիս ոչ այնքան հաճախ:

Հովհաննես Իսակով



Անդրանիկը արվեստում

Անդրանիկ Օզանյանի մասին բազմաթիվ երգեր ու առասպելներ են հյուսվել դեռևս նրա կենդանության օրոք, արվեստի տարբեր բնագավառների ներկայացուցիչներ անդրադարձել են Ձորավարի կերպարին:

Հերոսին նվիրված գործեր են ստեղծել հայ գրականության մի քանի կարկառուն դեմքեր: Արեւմտահայ բանաստեղծ Սիամանթոն գրել է «Անդրանիկ» վերնագրով բանաստեղծություն, որը տպագրվել է ժնեւում, 1905 թ.: Առաջին գիրքը Ձորավարի մասին լույս է տեսել նրա կենդանության օրոք. 1920 թ. Կ.Պոլսում, Վահան Թոթովենցը (Արսեն Մարմարյան ստորագրությամբ) լույս է ընծայել «Ձորավար Անդրանիկ եւ իր պատերազմները» գիրքը: Ամերիկահայ հռչակավոր գրող Վիլյամ Սարոյանը գրել է մի կարծ պատմվածք «Անդրանիկ Հայաստանի» վերնագրով, որն ընդգրկված է նրա «Ներշնչում եւ արտաշնչում» խորագրով պատմվածաշարում (1936 թ.): Անդրանիկի եւ այլ ֆիդայիների մասին է Համաստեղի «Սպիտակ ծիւփորը» վեպը: Հովհաննես Շիրազը Անդրանիկի մասին գրել է «Անդրանիկի սուրը», «Սպիտակ ծիւփորը Փարիզում» եւ «Արծան Անդրանիկին» (լույս է տեսել 1991 թ.): Շիրազի մահվանից հետո) ստեղծագործությունները: Սերո Խանգոյանի «Անդրանիկ» վեպի տպագրությունը խորհրդային տարիներին կասեցվել է. այն լույս է տեսել 1989 թ., երբ խորհրդային գրաքննությունը թուլացել էր: Մինչեւ 1960-1980 թթ. բարբառագետ-բանահավաք Սու-

րեն Սահակյանը Արեւմտյան Հայաստանի վերապրողներից գրառել ու մշակել է «Ասք Անդրանիկ զորավարի մասին» վիպաքը. հրատարակվել է Երեւանում, 2008 թ.: Կան նաեւ հերոսին նվիրված այլ գրական գործեր:

Ձորավարի մասին նկարահանվել են մի շարք վավերագրական ֆիլմեր: Դրանցից են «Անդրանիկը» (1929), Արմենա-ֆիլմ, Ֆրանսիա, ռեժիսոր՝ Արշո Շահաթունի, ով նաեւ խաղացել է գլխավոր դերը, 1990-ին՝ «Ձորավար Անդրանիկ» (Հայֆիլմ) վավերագրական կինոնկարը՝ նվիրված զորավարի ծննդյան 125-ամյակին (տեքստը կարդում է Խորեն Աբրահամյանը) եւ այլն:

Փանոս Թերլեմեզյանը, ով նույնպես մասնակցել է ազգային-ազատագրական պայքարին, 1925-ին ստեղծել է «Ձորավար Անդրանիկի դիմանկարը» կտավը: Ձորավարի արձանները տեղադրված են ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհի մի շարք այլ երկրներում:

Անդրանիկին նվիրված բազմաթիվ երգերից արժանահիշատակ են «Արծիվի պես» (Գուսան Շերան, 1904), «Անդրանիկ փաշան» (Գուսան Հայրիկ, 1913) ստեղծագործությունները:

Կովկասում հայ աշուղներ կային, որոնք ազգային հերոսներին երգեր էին ձոնում՝ հոխորտալի, զավեշտալից չափազանցություններով. այդ երգերով ամբոխն անսահման խանդավառվում էր: Մի օր՝ Թիֆլիսում եղած ժամանակ, երբ Անդրանիկն իր տանն էր, մի աշուղ փողոցով անցնելիս երգում



եր հերոսին նվիրված երգերից մեկը՝ հետեւյալ տողերով.

«Հերոս մռնչաց, Սուլթան գոռաց, Կիլիկի մի աչքից արտասուք շողաց»:

Անդրանիկը զայրացած բացականչեց պատշգամբից. «Շան որդիներ, այդ ինչ ամոթալի չափազանցություն է...»:

Անդրանիկին նվիրված իր հուշ-խոհագրության մեջ զավեշտական մի դեպք է նկարագրել Ավետիս Ահարոնյանը: Կամավորական գնդերի լուծարումից հետո հերոսը որոշ ժամանակ ապրում էր նրա տանը: Մի օր բակում լսվում է աշուղների սագի ու երգի ձայն: «Պատշգամբից վար նայեցի,- վեր-

հիշել է Ահարոնյանը,- երգիչը մի կույր ծեր աշուղ էր, որին առաջնորդում էր հաշմանդամ ոտքերով մի ծոռնված թշվառ: Երգը ռամիկ պարզություն ուներ, որ վերջանում էր հետեւյալ հանգերգով՝

«Գնանք Անդրանիկին օգնության»:

- Անդրանիկ, արի՛, արի՛,- գոչեցի ես:

Դուրս եկավ, նայեց վար:

- Հայ, Աստված ձեր տունն ավրի,- ասաց նա,- թե սրանք պիտի օգնեն, վա՛յ Անդրանիկին:

Ու սկսեց քրքջալ՝:

Սրանք, ինչ խոսք, զավեշտական պատմություններ են, բայց ցույց են տալիս ժողովրդի ան-

սահման սերը հերոսի հանդեպ:

Իսպանահայկական արմատներով (հոր տատը հայ էր՝ ծնունդով պատմական Հայաստանի երգում նահանգից) ֆրանսիացի մեծ կատակերգակ Լուի դե Ֆյունեսը հաճույքով էր լսում գորավար Անդրանիկին նվիրված երգերը, իսկ ամեն տարի՝ ապրիլի 24-ին, պարտադիր այցելում էր Պեր Լաշեզ գերեզմանատուն եւ իր հարգանքի տուրքը մատուցում մեծ Ձորավարի հիշատակին, ծաղիկներ դնում նրա շիրմին:

Հրաչիկ Սիմոնյանի «Անդրանիկի ժամանակը» գրքից

Սա մե՛ր Անդրանիկն է



Երբ մարտի դաշտում էր, բոլորը խուճապահար փախչում էին նրանից, իսկ հազվադեպ խաղաղ օրերին ինքն էր խուսափում բոլորից՝ կրապաշտության ցույցերին տուրք չտալու համար:

Վկայողը Ավետիս Ահարոնյանն է.

«...Այդ օրերումն էր, որ մի անգամ Հ.Թումանյան եկավ առաջարկելու, որ Անդրանիկի հետ միասին Մուշտեղի կոչված այգին գնանք ժամանակ անցընելու:

- Աղա՛,- ասաց կենսուրախ ու անուշ բանաստեղծը,- տանենք Անդրանիկին մի լավ խորոված ու տացնենք, քեֆ անենք. ես տեղը գիտեմ:

- Շատ լավ,- ասացի,- գնանք:

Լի օր էր, եւ վստահ էինք, որ մեզ ոչ ոք չի խանգարի: Հասանք. հաճելի ժամանակ անցըրինք պարտեզի ծառերի տակ. ասում, խոսում, ուրախանում էինք, վստահ, որ մեն-մենակ ենք, եւ որեւէ անհանգիստ աչք չի դիտում մեր սրտաբաց զեղումները:

Ու մեկ էլ ինչ տեսնենք, փայտե ցանկապատի վրայից բազմաթիվ աչքեր մեզ են հառած, ավելի ճիշտ՝ Անդրանիկին, որի անունն էր հնչվում չորս կողմից:

- Ծո, այս անաստվածները ի՞նչպես իմացան,- ասաց Անդրանիկ ժպտալով:

Ով կասի երբեք, թե ինչպես իմացան, եւ մեծ մասամբ օտարազգիներ էին: Մեր ուրախությունը փճացավ: Թողինք դուրս

եւանք. քայլում էինք հանդարտ, մինչ անծանոթ մեկը նայում էր Անդրանիկին. հեռացած էինք այգուց, երբ քրթմնջուն լսելով՝ հետ նայեցի եւ ինչ տեսնեմ - տասնի չափ մանուկներ, հազիվ յոթ-ութ տարեկան, գլխաբաց, դեմքերն անվա, քիթերը թաց, ոտաթուպիկ ու իրար հրիդելով՝ մեզ հետեւում են կրնկակոխ. մեծ մասամբ ռուս մոլոկանների շիկահեր երեխաներ են. բայց սրանց մեջ կենտրոնում մեկը կա, թխադեմ, սեւաչյա, խոիվ սեւ մազերով, եռանդուն ու հրամայական շարժ ու ձեւով, որ աշխատում է ճիշտ Անդրանիկի քայ-

լերին հետեւել եւ ձեռքերը տարածած ընկերակիցների առաջ՝ սաստում է նրանց.

- Վա՛, ուր եք գալիս, սա մե՛ր Անդրանիկն է, գնացե՛ք:

Հայարտ էր հայ մանուկը, փողոցների փոշու ու աղբի մեջ թաքավում այդ երեխան, որ բախտ ունի Անդրանիկի, «մե՛ր Անդրանիկի» հետեւից քալել... Հայ ժողովրդի ոգին էր խոսում այս մանուկի մեջ:

Ոչ միայն հայության, հապա եւ մեր թշնամի ցեղերի համար Անդրանիկ առասպելական ածրահա էր...»:

Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ



Չորավարի հրաժեշտի խոսքը

Չորավար մեծարող զինվորներ շատ են եղել ու միշտ կլինեն: Բայց զինվորին մեծարող զորավարը դու էիր ու միայն դու: Ծնունդդ շնորհավոր:

«Չինվորներու»

Սիրելի Չինվորներս,

Վերջին տխուր դեպքերուն առջեւ երբ կը կարմրիմք, ու երբ օտարներ կը փորձեն անվանարկել Դայ զինվորին արժանապատվությունը, դուք ձեր քաջությունը, ձեր պատմությունը եւ զործերով անոնց աչքերուն առջեւ կը ցցվիք՝ արհամարհելով զանոնք, բարձր բռնելով Դայ զինվորին եւ Դայ ցեղին արժանապատվությունը: Դուք գիտցաք կռվիլ անոր համար, որ կը հասկնայիք կռվին արժեքը. դուք կրցաք պարտության մատնել թշնամին եւ հիացում հրավիրել

ձեր վրա, անոր համար, որ գիտեիք նվիրվիլ եւ գիտեիք ծառայել Դայրենիքին եւ անոր ազատության:

... Ի՞նչ բան էր, որ մղեց ձեզ թողուլ ձեր տուները, ձեր գործերը եւ հանգիստը՝ երիտասարդ կյանքի վայելքներուն հետ, եւ գալ պատերազմի դաշտ շակելու ձեր հրացանն ու տուրիկը: Ես կը զգայի եւ կը հասկնայի ձեր զոհաբերումներուն արժանիքը եւ իմաստը: Ես գիտեի, թե որքան ծանր էր ձեր վրա ճնշող պատասխանատվությունն ու պարտականությունը:

Մեծ համբերությամբ կրեցիք ձեր չարչարանքները եւ մեծ հավատքով տարիք ձեզի հանձնված գործը: Ես չլսեցի տրտունքի ոչ մեկ բառ, ցավի ոչ մեկ արտահայտություն: Մերկ էիք, ան-

թի մնացիք օրերով, ձմրան ցուրտը, բուքն ու քամին, ձյունն ու անձրեւը կարկուտին հետ ծեծեցին ձեզ, նեղեցին ձեզ, բայց դուք արհամարհեցիք զանոնք թշնամիին զնդակներուն հետ: Ձեր այս կեցվածքը քաջալերեց զիս, ուրախացուց սիրտս, եւ մենք կրցինք շահիլ փառավոր հաղթանակներ ԴԱՅ ԱՆՈՒՆԻՆ ԴԱՄԱՐ:

... Օտարը հիացավ ձեր վրա, հիացավ ձեր հրամանատարն ալ եւ բերկրեցավ ձեզ համար, ու վստահ ձեր Դայու հզոր բազուկներուն՝ նոր հաղթանակներու դիմեց...

Ի՞նչ վսեմ սեր ու մաքուր զգացում էր որ ունեիք դուք ձեր կուրծքերուն տակ: Ես բոլոր դժվարություններուն մեջ ձեր դեմքերուն վրա հրճվանք կը տեսնեի, երբ ասկե ու անկե Դայ մա-



Մուկնեյր եւ Դայ գաղթականներ հավաքելով ինձի կը բերեիք: Դուք ձեր հացը, ձեր հագուստը եւ հանգիստը կը տրամադրեիք անոնց երջանկության, անոնց

բարօրության եւ հանգստին համար... Թշնամիին անկունը ձեր հրճվանքն էր եւ Դայու մը ազատագրումը՝ ձեր ժայտը:

Ինկան ձեզմե շատերը: Անոնց աճյունները խառնվեցան մայր հողին: Խուսկով ու աղոթքով օրհնված ու սրբացած քար մը չդրին անոնց վրա, աղոթք եւ սաղմոս չկարդացին, այլ միայն հովը սուլեց՝ փայփայելով անոնց սեւ ու սիրուն վարսերը...

Սիրելի Չինվորներս,

Մա մեկ քանի տողերս իբր հարգանքի եւ գնահատանքի նշան ձեզի կը թողում իբր կտակ եւ սրտածոն ապրողներուդ եւ իբր տապանաբար՝ անթաղ եւ անշիրիմ զինվորներուս...

Անդրանիկ, 1921թ.»

Կարո ՎԱՐԴԱՆՅԱՆ

Անդրանիկի ձին

Իլիչ ԲԵԳԼԱՐՅԱՆԻ «Դայրուկներ» գրքից (կրճատումներով)

Փառքի ու պատվի հասած շատ հերոսներ փառաբանել են իրենց հավատարիմ ու անբաժան ձիերին՝ իրենց հաղթանակների գրավականը համարելով նաեւ նրանց: Այդ արարածներն իրենց մեջքերի վրա տարել են մարդկության պատմության այնպիսի հսկաների, ինչպիսիք են Ալեքսանդր Մակեդոնացին եւ Դանիել Բուսոնը, Նապոլեոնն ու Մուսկորովը, Վարդան Մամիկոնյանն ու Անդրանիկ Օզանյանը: Վերջինս մի առանձնակի սեր ու գորովանք էր տածում իր ձիու՝ իր հավատարիմ ընկերակցի՝ Ասլանի նկատմամբ:

Ավանատները պատմում են, որ վճռական պահերին զորավարը մի պահ առանձնանում էր, շոյում իր սիրելի ձիու՝ Ասլանի բաշն ու նրա թամբին նստելով՝ սուրը մերկացրած, զնդակից էլ արագ սլանում դեպի թշնամու դիրքերը: Արտակարգ էին Անդրանիկի այդ խիզախությունները: Գնդակները չորս կողմից վզգում էին, բայց երբ իրեն զգուշացնում էին, նա պատասխանում էր. «Թուրքի զնդակը մեզ չի վնասիլ, ան կույր է...»: Սրանք մեծ զորավարի բառերն էին, որոնք նա հաճախ էր օգտագործում:

Ոչ թե արշավում, այլ թռչում էր նա՝ Ասլանի բաշն գրկած: Զրեղեն ձին կարծես զգում էր գնդակների տարափի ուղղությունը, այնպես էր իր մեջքին տանում տիրոջը, որ գնդակներն անհետանում էին նրա հմայքից ու արհամարհանքից: Ասլանը լավ մարզված էր: Տեսնում եւ զգում էր այն տարածքը, որի վրայով սլանում էր: Նրա համար դարուփոս չկար, քար ու ժայռ չկար: Երբեմն էլ մարդիկ մտածել են, թե զորավարն իր սուրը ամուր մտցնում էր ամպերի մեջ ու նրանից ամուր բռնած, երկու ոտքերով Ասլանին բարձրացրած՝ տանում էր, ու երբ հարվածելու կարիք էր լինում, հզոր բազուկով ամպերի միջից հանում էր իր սուրն ու ահեղ որոտի նման զարկում թշնամուն: Չարկուն-չարդուն էր, կրկին բարձրանում ու էլի զարկում: Էլ հոգնել չկար, ահ ու վախ չկար: Մի զգացմունք կար՝ ազգ ու հայրենիք, որ սերն էր նրա ու արդարությունը, որ ուժն էր բազկի, իսկ նրա Ասլան ձին իր մայր հողից հանված պղնձի ու կապարի խառնուրդից էր ծուլված, դրա համար էլ թշնամու զնդակները, նրան դիպչելով, զրնգոցով ցած էին թափվում: Այսպես անխոցելի էր Ասլանը, ինչպես անխոցելի ու անառիկ էր նրա հեծյալը՝ քաջն Անդրանիկը:

Մեծ զորավարի մասին ականատեսները գրել են, որ երբ նա ճակատամարտից հետո իջել է իր Ասլանի թամբից, թափ է

տվել զինվորական շինելը, նրա վրայից զրնգոցով գետին են թափվել արձճի կտորտանքները: Պատմում են նաեւ, որ երբ Ասլանը տեսնում էր իր տիրոջը, սկսում էր խրխնջալ եւ ոտքերը գետնին խփելով՝ պար գալ եւ այնքան ժամանակ, մինչեւ որ մեծ զորավարը մոտենում եւ շոյում էր իր Ասլանի արծաթի պես փայլատակող բաշը: Ասլանի աչքերը փայլատակում էին, նա վրնջացնում էր ու շրթունքները մոտեցնելով տիրոջ բաճկոնին՝ փնջացնում էր, կարծես փարվել էր ուզում նրա ոտքերին: Այնուհետեւ գլուխը հպարտ վեր էր բարձրացնում, նայում չորս կողմը, եւ թվում էր, թե նա իր պաշտելի էակին ներկայացնում է շրջապատին՝ սիրահարված համրի նման, եւ կարծես ասում էր՝ տեսե՛ք, թե ով է իմ տերը: Ասում են, որ երբ առաջին անգամ մեծ զորավարը հյուրընկալվել է Ասլանի նախկին տիրոջ մոտ, որ դեռ թամբ չէր դրել Ասլանի վրա, Ասլանը իր երանակից անջատվել է, վազքով եկել-կանգնել մեծ զորավարի կողքին ու վրնջալով-փնջացնելով սկսել է խաղալ ոտքերի վրա: Այնպիսի տապալորություն է եղել, որ կարծես նա վաղուց էր սպասում քաջին: Բոլորը ապշած այդ տեսարանին են մայել: Ասլանի տերը, որ չափազանց մեծ հարգանք էր տածել զորավարի հանդեպ, ուրախացած գլուխ է տվել ու, ձեռքերը կրծքին դնելով՝ որպես ջերմ հարգանքի նշան, խնդրել է զորավարին, որ չմերժի իր առաջարկը եւ Ասլանին ընծա ընդունի: Չորավարը մեծ երախտազրույթամբ ու հաճույքով է ընդունել նվերը եւ հենց այդտեղ էլ, առանց վարժեցնելու, կարգադրել է թամբել Ասլանին:

Սովորաբար, անվարժ մոսյոզը երբեք միանգամից եւ մեկ օրում չի ընդունում թամբն ու սանձը, սակայն այս անգամ Ասլանը զարմանալի հեզությամբ է ընդունել երկունսն էլ: Բոլորը քար կտրած սպասել են, թե երբ է քաջ Անդրանիկը իր նոր մոսյոզը հեծնելու:

Մեծ զորավարը դուրսգազնին հատուկ կեցվածքով ու քայլվածքով է մոտեցել Ասլանին ու, ոտքը ասպանդակին դնելով, բազմել թամբին: Խրխնջացել է Ասլանը, թռչկոտել են ծառս է եղել՝ կանգնելով հետեւի ոտքերի վրա, սակայն երբ դուրսգազնը իր հզոր բազուկով բռնել է սանձն ու իրեն քաշել, շոյել մոսյոզի պարանոցը, Ասլանը հանդարտվել է ու տեղում սկսել դոփել գետնին. կարծես թե ցանկացել է ասել՝ թույլ տուր թռչնե՛մ դեպի Սասնա սարերն ու թեզ մեջքիս առած երկինք բարձրանա՛մ:

Սակայն հարգի չէր, որ փաշան առանց երախտի խոսք ասելու հեռանար: Շատ թեթեւ ցատկով նա իջել է թամբից եւ երախտի մի քանի խոսք ասելուց հետո մոսյոզի սանձը հանձնել իր ձեռքերին, իսկ ինքը նստել իր նախկին ձիու վրա եւ այդպես էլ բաժանվել Ասլանի տիրոջից:



Այդ օրվանից մինչեւ իր կյանքի վերջը նրանք անբաժան ընկերներ դարձան եւ բազմաթիվ ճակատամարտերի մասնակցեցին: Ճակատամարտեր, որոնք Գեորգիեյան առաջին (ոսկյա), երկրորդ (ոսկյա), երրորդ (արծաթյա) եւ չորրորդ (արծաթյա) խաչերով ու Գեորգիեյան սրով փառաբանվեցին: Իսկ մինչ այդ հայ դուրսգազնը արդեն Բալկանյան պատերազմում պարզեատրվել էր «Քաջության» ոսկյա երկու խաչերով եւ «Գեորգի Անհաղթի» շքանշանով:

Եվ այս փառապանծ ուղին նա անցել էր իր հավատարիմ ընկերոջ՝ Ասլանի հետ:

Քանի-քանի՝ անգամներ իմաստուն կենդանին հրաշքներով փրկվել է շրջափակման օղակներից՝ իր հետ տանելով իր քաջ հեծյալին:

Նա շատ զգայուն էր եւ զգույշ. կանխատեսում էր ամեն վտանգ: Նրանք հասկանում էին միմյանց: Նա այնպես էր լսում ու ենթարկվում իր տիրոջը, որ բոլորը զարմանում էին: Խոսակցություններ էին տարածվել, թե իբր մեծ զորավարը հասկանում է իր մոսյոզի լեզուն, որ նրանք զաղտնի խոսում են միմյանց հետ:

Ասլանը երբեք չէր զայրացնում իր տիրոջը: Նա հավատարիմ ընկեր էր ու կարգապահ զինվոր:

1919 թվականին մեծ զորավարը Դայաստանի իշխանությունների պահանջով թողեց հայրենիքը, որի համար այդքան մաքառել էր: Նա բռնեց պանդխտության ճանապարհը: Պանդխտության մեջ էլ, հայրենիքի կարոտից, հայ դուրսգազնը 1927 թվականին Ֆրեզոնոյում կնքեց իր մահկանացուն:

Չազարավոր հայրենակիցներ աշխարհի տարբեր անկյուններից եկել էին իրաժեշտ տալու մեծ զորավարին: Գնդակակազմից մասնակցող թափուրի առջեւից ընթանում էր դուրսգազնի աճյունը կրող կառքը: Իսկ դրա առջեւից գլխիկոր, հանդարտ քայլում էր Ասլանը՝ մեջքին՝ դուրսգազնի գեները: Անդամալի թախիծ կար նրա աչքերում: Քայլում էր՝ աշխարհից բեզարած ու խռոված: Կյանքում առաջին անգամ այդ շքեղ գեներերի տակ նա անշուք էր ու անտեր:

Ավանատները պատմում են, որ նրա աչքերից արցունքի կաթիլներ էին հոսում ու, գլխիկոր քայլելով, նա անընդհատ գլուխն էր աջ ու ձախ շարժում, կարծես թե ինքն իրեն հարց էր տալիս՝ էսպես ո՞նց կլինի, եւ օրվա համար՝ էր, որ պայքարեցիք... Ինչ իմանար խեղճ կենդանին, որ ազնիվ պայքարի ճանապարհը շատ կարճ է, որ ազնիվները պայքարում են, անազնիվները վայելում, որ հայրենի հողի վրա անգամ շատ ժամանակ նրանք մի գերեզմանի տեղ էլ չեն ունենում, ինչպես վեց տասնյակից ավելի տարիներ չունեցավ հայ դուրսգազնը:

Պատմում են նաեւ, որ իր տիրոջ մահից հետո Ասլանը հրաժարվել է ուտելուց, ու մեկ օր էլ, երբ թղթակիցներ են եկել նկատահանելու լեզենդար զորավարի առասպելական ձին եւ խնդրել են ձեռքանակին, որ նրան տանի ծովափ եւ բարձրացնի ժայռի վրա, Ասլանը հեզաբարո եմբակվել է ձիապանին եւ շարժվել դեպի ծովը, ու երբ հասել են ծովափնյա ժայռին, նա մի պահ աշխուժացել է՝ դառնալով նույն Ասլանը, որ տարիներ վարումսկ մազկուն էր Սասնա սարերն ի վեր: Արագ բարձրացել է, կանգնել քարափի գլխին, վերջին անգամ մայել դեպի գերեզմանները, որտեղ իր դուրսգազնական տիրոջ աճյունն էր ամփոփված, եւ ծառս լինելով՝ քարափից նետվել էր ծովը, իսկ ծովի ալիքները, որ իր տիրոջ բազուկների պես հզոր էին, գրկել են նրան ու տարել հավերժության գիրկը:

Ռոբերտ ԵՍԱՅԱՆ

Արցախյան քառյակների՝ գրված Գյումրիում

Իմ աչքերը բանուկ ճանապարհներ են կյանքի-մահի միջև ընդարձակ տեղանք, որտեղ բույն են հյուսում արագիլները, թռիչքով գծելով մի գոհասեղան:

Այս ապրիլը ծառից բխող լույսի ոստ է. հոգեվարք չէ անհույս զոհի: Եվ ապագան արագիլի թուխս է նստել տաք թեւերին հորիզոնի:

Երբ խաչքար համբուրող բիբեր կայծկլտացին աղոթքի համար, հանգչող մարտադաշտում արյան թռչունները երկինք սլացան, սերը անդունդն ի վեր բարձրանում էր՝ հոգու կանթերը վառած, ճերմակ օրհնանքները մանանայի հանգույն սահուն էին ցած:

Չորս ձեռքերի հայացքը բխել ճյուղին մասրենու, բուրուն է հողի եւ տարածության վարդափեղեկներով, որոնցից մեղուն համբույր առ համբույր երբ վեր է ելնում, ցնծում են ճյուղերն հրեշտակների անբառ երգերով...

Նարեկին

Երբ հիշողության ջրթակի լար է տողս արթնացող, բազմաճյուղ հողն է շնչառությունը թափվող անձրեւի, դու հայտնվում ես, տղաս, ասուպի սահուն թռիչքով եւ ազատում ինձ տառապանքների քարե սանձերից:

Գուցե այս դուռը՝ սկիզբն հորիզոնի, ճանապարհ բացող միայնակ բառն է, դեռ ապրող հոգին, որ չի համբառնել ու մնացել է սրբազան զոհից...

Ճանապարհը անհայտ ցավի դուռը բացեց ու ներս մտավ, մի հին ցավի ճառագայթով փակվեց վերքը մոլորակի, ե՞րբ է ցավը խարխիս նետել ժամանակից եւ մարդուց դուրս, հարվածը չես կանխատեսի, ինչպես ուղին մոլոր արկի:

Տարածության բաց աչքերն են, իրերի դեմքն ու պարզ լեզուն, տվյալտանքի խարույկն են ես հավատամքի դառն դիմաց, շնչառության մեջ պատկերի ծաղկող լույսն են՝ մի նոր խզում, որ չառնչվող խենթ բառերին հաղորդում է հոգու իմաստ:

Շրջանցում են ինձ՝ հանդիպելով իմ ճակատագրին, ե՞ս եմ փակուղին, թե՛ ճանապարհս ընթացքից դուրս է, ծնվող բառն, անշուշտ, նոր է կտրվել տաք պորտալարից, աշխարհն ինձ համար եւ զուտ երկվությունն, եւ ներսուղորս է:

Թռչունը հոգուս կտավն է տանում երկինքներն ի վեր, ծաղկած ճյուղերով գուրգուրում է ինձ անձրեւը գարնան, ամպն ի վար սահող հայացքը միթե՞ է՝ դիպվածի նվեր, իսկ աչքերը թո՛ մանուշակաբույր աղոթքի խորան:

Մի կշիռ է բացակայում կյանքի բոլոր նժարներից, մարդն իր սիրո մեջ անկայուն, մի այլ տեղ է փնտրում խորան, ազատությունն իր կորցրած՝ ոխ է քամում սին ժամերից, բզկտում են հոգին նրա աշխարհակալ բուք ու բորան:

Լեզենդար նախագահը՝ երդվյալ շախմատասեր


Նորեկը քաղաքականության մեջ նման է գեղանկարչի, ով գիտի միայն երկու գույն՝ սպիտակ եւ սեւ կամ եթե հարմար է՝ սեւ-սպիտակ ու կարմիր:

Կարլ Մարքս

Հայտնի է, որ պետական եւ քաղաքական շատ գործիչներ ոչ միայն բարձր էին գնահատում շախմատային արվեստը, այլև իրենք նույնպես պայքարի մեջ էին մտնում: Տեղին է հիշել ամերիկացի հանրահայտ լրագրող Ռոլֆեր Լիպմանին, ով այն հարցին, թե ինչ հատկանիշներով պետք է օժտված լինի ԱՄՆ-ի նախագահը, այսպես է պատասխանել. «Նա պետք է լինի նաև լավ շախմատիստ: Ունենալով նման նախագահ՝ մենք քիչ համարձակության կդիմենք՝ ներքաշվելու ռազմական արկածախնդրությունների մեջ...»:

Հիշելով պետությունների շախմատասեր նախագահների մասին առաջին հերթին պետք է առանձնացնել Կուբայի Հանրապետության լեզենդար նախագահ Ֆիդել Կաստրոյին, ով իր բազմազարդ ու բազմաբնույթ առօրյայում ժամանակ էր գտնում շախմատով զբաղվելու համար:

1966-ին, երբ Կուբայի մայրաքաղաք Հավանայում պետք է մեկնարկեր շախմատի համաշխարհային հերթական օլիմպիադան, Ֆիդել Կաստրոն այցելում է «Հավանա Լիբրե» հյուրանոցի դահլիճ, ուր անցկացվելու էին մրցումները, որպեսզի անձամբ հանդգնի կատարված նախապատրաստական աշխատանքների լիարժեքության մեջ: Այս առաջին հարցն ուղղում է կազմակերպիչներին. «Խնդրում եմ, փնտրեք աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանին»: Եվ մի քանի րոպե անց, նրանք ծանոթանում են: Ավելի ուշ, Հավանայի Հեղափոխության հրապարակում անցկացվում է միժա-



մանակյա խաղաշար... 6840 խաղասեղանների վրա, եւ այն վարում էին 52 երկրների առաջատար շախմատիստներ: Խաղաշարի մասնակիցների մեջ էր նաև Ֆիդել Կաստրոն, ով գերադասել էր ուժեղը չափել հենց աշխարհի չեմպիոնի հետ: Այնպես է ստացվում, որ, ի վերջո, Կաստրոն մեն-մենակ է մնում Պետրոսյանի դեմ: Իսկ շուտով վերջնախաղում նրանց մեծամարտը խաղաղ ելք է ունենում: Կաստրոն, դիմելով խաղընկերոջը, ասում է. «Չցանկացա՞ք ինձ նեղացնել: Կարծում եմ, որ դուք ոչ միայն մեծ շախմատիստ եք, այլև մեծ դիվանագետ...»:

Երբ բարձրախոսով հայտնում են, որ Պետրոսյանն ու Կաստրոն հաշտություն են կնքել, Հեղափոխության հրապարակը թնդում է ծափահարություններից: Կուբացիները վանկարկում էին Պետրոսյան, Կաստրո: Այնուհետև Պետրոսյանը հյուընկալվում է մեծապատիվ նախագահի հարկի ներքո: Ասենք նաև, որ պատմական այն

յուրօրինակ խաղասեղանը, որի վրա «սրերը խաչածեցին» Կաստրոն ու Պետրոսյանը եւ որի 64 վանդակները մարմարից են, Կուբայի Հանրապետության նախագահը նվիրում է Պետրոսյանին, իսկ վերջինս էլ՝ Հայաստանի շախմատի ֆեդերացիային:

Ի դեպ, 2002թ. վերջին լեզենդար նախագահը մասնակցում է եւս մեկ զանգվածային շախմատային խոշոր միջոցառման: Հավանայի այդ նույն Հեղափոխության հրապարակում 550 գրոսմայստերների, վարպետների եւ ուրիշ ճանաչված շախմատիստների դեմ միաժամանակյա խաղաշարում պայքարի մեջ էին մտել տասնմեկ հազար շախմատասերներ: Կարելի է ասել, որ նման միջոցառում աշխարհում ոչ մի անգամ չէր կազմակերպվել: Կաստրոն այս անգամ նույնպես մասնակցեց այդ հրապուրիչ, արտասովոր իրադարձությանը եւ որպես մրցակից ընտրեց կուբացի հայտնի գրոսմայստեր Սիլվինո Գարսիային:

Նա հպարտությամբ էր ներկայացնում իր ժողովրդին

Մենք՝ Երեւանի պետհամալսարանի ժուռնալիստիկայի բաժնի 1968 թվականի շրջանվարտներս, նույնպես անմոռաց հանդիպում ունեցանք աշխարհի 9-րդ չեմպիոն Տիգրան Պետրոսյանի հետ: 1968-ի ապրիլ ամսին մեկնել էինք Մոսկվա՝ մասնագիտական պրակտիկայի: Դեռեւս Երեւանում կազմել էինք մոսկովյան մեր ծրագիրը: Նախատեսված էր առաջին օրը լինել ոչ թե որեւէ խմբագրությունում, տպարանում կամ հանդիպում ունենալ հայտնի ժուռնալիստի հետ, այլև տեսնել մեր սիրելի չեմպիոնին, գրուցել նրա հետ: Հանդիպման վայր ընտրեցինք Մոսկվայի ժուռնալիստի կենտրոնական տունը: Սակայն պարզվեց, որ այդ օրը մեր ցանկացած ժամին ժուռնալիստի տանը տեղի էր ունենալու ուրիշ միջոցառում: Հուրախություն մեզ՝ ժուռնալիստի տան դեկավարությունն իմանալով, որ մեր հյուրն է լինելու աշխարհի չեմպիոն Տիգրան Պետրոսյանը, ընդառաջեց մեր խնդրանքին: Հայ ուսանողների անսպասելի հրավերը Պետրոսյանը գոհունակությամբ ընդունեց:



Իր թեկնածուական ատենախոսության մասին: Նա անհանգստություն հայտնեց, որ Շախմատիստի տան կառուցումը Երեւանում դանդաղ է ընթանում, որ Հայաստանի շախմատիստների ելույթները գոհացուցիչ չեն:

Ձրույցին հաճախակի միջամտում էր տիկին Ռոման, ով ամուսնուն հիշեցնում էր, որ նախատեսված կես ժամը վաղուց անցել է, որ իրենք արդեն ցայտնոտում են, իսկ գործերն այնքան շատ են: Եվ ամեն անգամ մեր մեծագույն հայրենակիցն արդարացնում էր, պատասխանելով, որ չի կարելի բաց թողնել միանգամից այսքան հայրենակիցների հանդիպելու առիթը: Պետրոսյանին ուղղված հարցերը շատ էին ու բազմաբնույթ: Ուսանողներից մեկի՝ բացարձակ գերազանցիկ ուսանող Լեւոն Անանյանի (ի դեպ նա իր ավարտական աշխատանքը շարադրել էր անգլերեն լեզվով) այն հարցին՝ արդյոք դուք

ծեզ հայ էք գգում, թե շախմատի չեմպիոն, Պետրոսյանը պատասխանեց.

- Ամեն անգամ պայքարի մեջ մտնելով, ես ինձ հպարտ եմ զգում, որ ներկայացնում եմ հայ ժողովրդին:

Իսկապես, նա իր ողջ հոգով ու եռօրյամբ հայ էր: Որդուն՝ Վարդանին, հաճախ էր հիշեցնում, որ նա հայ է եւ արժանի պետք է լինի իր ազգին:

Ամեն անգամ, երբ առիթ էր լինում, որեւէ հայի ներկայացնել, ասում էր. «Ծանոթացե՛ք խնդրեմ, հայ մեծ ժողովրդի ներկայացուցիչն է»:

Հայերի հետ խոսում էր հայերեն, նույնիսկ այն դեպքում, երբ հայ գրուցակիցը խոսում էր ռուսերեն, միեւնույն է, նա պատասխանում էր հայերեն...

«Մեծ մարդկանց կյանքը սկսվում է նրանց մահվան պահից» (Ժան Լյուսեն Արրետ, ֆրանսիացի գրող): Իսկ ինչ հռոմեական փիլիսոփա եւ քաղաքական գործիչ Ցիցերոնը մի առիթով ասել է՝ «Կյանքը կարճատև եղավ, բայց փառքը հավերժ կլինի...»

Արրետայի եւ Ցիցերոնի խոսքերն անվերապահորեն վերաբերում են նաև Տիգրան Պետրոսյանին...

Գագիկ ՀԱԿՈՒՅԱՆ
ԽՄՄ սպորտի
եւ ՖԻԴԵ-ի վարպետ, պրոֆեսոր,
մեր շախմատային մեկնաբան




Փորձիր լրացնել

Գարուն է գալիս

Ուղղահայաց

1. Աստղածաղկավորների ընտանիքի դեղաբույս՝ ոսկեդեղին ծաղիկներով՝ Կղմուխ կամ...: 2. «Էլի...կ-գա, կբացվի վարդը, սիրելեանը էլի յարին կմնա»: (Ե. Չարենց, «Էլի...կգա»): 3. Բարդածաղկավորների ընտանիքի բույս՝ տերեփուկ, ծծմոր կամ...: 5. Հեշտադիր տերեւներով, հյութալի, մասի՝ մոմաշերտերով պատած, եզրերը՝ փշոտ դեղաբույս՝ ալոե կամ...: 6. «Երբ երկնքում փայլեց լուսինը, ...ը թռավ վարդի թփի մոտ: Նստեց ճյուղի վրա ու սեղմվեց փշին: Ամբողջ գիշեր նա երգում էր սիրո մասին»: (Օսկար Ուայլդ, «...ն ու վարդը»): 8. «Վաղվել է շուրջը գարուն, եվ նագում էր կեչին, գարնան ...ն էր բուրում մեր համբյուրն առաջին»: («Վաղիմիր Հարությունյան, «Սիրո երգ»): 9. Վարդագինեթին պատկանող փշոտ թուփ՝ հնգաթեւ սպիտակ ծաղիկներով՝ կոկոնեցի կամ...փշոտ: 10. Այս ծաղկաբույսի հայրենիքը Հնդկաստանն է: 12. Բակլազգիների ընտանիքի խոտաբույս, որի հատիկներն օգտագործվում է սննդի մեջ: 16. «Գարուն եկավ, վարդը շողով, բլբուլն եկավ անուշ խաղով»: (...Հավասի, «Գարուն եկավ»): 17. Մեր հանրապետության էնդեմ ծաղկատեսակներից, Հայաստանից դուրս ուրիշ ոչ մի երկրում չի հանդիպում՝ ...նրբագեղ: 18. դժնիկազգիների ընտանիքի պտղատու բույս՝ վայրի ունաբի տեսակ: 19. «Եկար, բերիր վարդը կարմիր, ...սմբուլ, սիրուն բլբուլ»: (Աթաբեկ խնկոյան, «Մայիս»): 24. Խռովկան ծառատեսակ, եթե չպոկես ծաղիկները, ապա այն հաջորդ տարի չի ծաղկի: 25. Խոշոր, նարնջադեղին ծաղիկներով բույս, որը բացվում է միայն պարզ, արեւոտ օրերին: Ծագում է Հարավային Աֆրիկայից: 29. «Չմեռն անցավ, եկավ գարուն, Չյունը հալվեց, լցվեց առուն: Արեւ ծագեց Արեւելքից, ...եր քաշեց գետնի տակից»: (Աթաբեկ խնկոյան, «Գարուն»): 30. Ծաղկաբույս՝ օձի սխտոր, ճնդիան կամ...: 35. Մերձարեւադարձային մշտադալար բույս, որ մեզ մոտ մշակվում է սենյակային պայմաններում: Պտուղները դեղին են ու թթվաչ: 36. «Պրոսում գարուն անկասելի, իսկ իմ ներսում՝ նորելուկ սեր: Օր-ցերեկով նստած...: Անվիշտ կարոտ»: (Պ. Սեւակ, «Ասա «Ամեն»): 37. Հայոց մեջ այս ծառն ընկալվել է որպես սրբազան ծառ, երկարակեցության, ուժի ու հզորության խորհրդանիշ: 38. «Գարունը այնքան ծաղիկ է ..., Գարունը այնպես պայծառ է կրկին, - Ուզում եմ մեկին քնքռորեն սիրել, ուզում եմ անուշ փայփայել մեկին»: (Վահան Տերյան, «Գարուն»): 42. Սենյակային բույս, որը ծաղկում է տարին մեկ անգամ: 43. Ծաղիկ, որը տղամարդիկ նվիրում են կանանց՝ որպես հարգանքի նշան: 44. «Չյան սպիտակ օրորոցից, ինչպես մանուկն իր մոր ծոցից, ո՞ր ծաղիկն է մեզ... գալիս, գարնան գալը իմաց տալիս» (հանելուկ ճնծաղիկի մասին): 48. Խուլեղիմազազգիների ընտանիքի պատկանող դեղաբույս՝ մշտիկ կամ...: 50. Աստղածաղկազգիների ընտանիքի դեղաբույս՝ անթառան կամ...ծաղիկ: 51. Խոշոր, հոտավետ, սպիտակ կամ դեղին ծաղկաբույսեր ունեցող, մեղրատու, դեղագարդիչ ծառ: Թվում է թե ...ների բույսը մի նոր ալիք հորդեց սենյակը Հարայա Քոչար 54. Միամյա եւ բազմամյա խոտաբույս՝ ճղճե, դոզա, ագռավի ծաղիկ կամ...: 55. Նեկտարատու բույս, որի ստորգետնյա մասից ստանում են ներկ, որով ներկում են բուրդը: 56. թունավոր բույս՝ գայլուկ, գլխաբատ կամ...:



44. «Անուշ...իկ, եկար գարնան, Ծաղկեցիր այգի, բուրաստան» (Հավասի, «Չեփյուռ բարեւ տար»): 45. Մշտադալար ծառ՝ ակռի, մատիտածառ, հարար կամ...: 46. «Բերել եմ քեզ..., մրգեր ու ծաղիկներ, ու տխուր հուշը մեր, սիրո անցած մեր պատմության» (Արմեն Մովսիսյան, «Հանդիպում»): 47. Ամենուր տարածվող եւ բոլոր տարիների հացահատիկային եւ բանջարաբուստանային կուլտուրաները վնասող խոտաբույս: 49. «Գարունն իր պաղ ու տաքուկ շունչն է օդում տարածել, ինչ-որ...է քեզ կանչում..., որ դու չես ճանաչում» (Պ. Սեւակ, Անվերնագիր): 52. Իր Ծաղիկներից ստացվող մեղրի քանակով մյուսներին գերազանցող ծառ (1 հա-ից՝ 1000 կգ. Մեղր): Լռնի, կակոի կամ...: 53. բազմամյա խոտաբույս, թարմ վիճակում ամբողջ բույսը թունավոր է, սակայն այն սիրելի կեր է համարվում վայրի խոզերի համար՝ կանաչ կամ...: 56. «Ծիրը թեթեւ ժպիտով ծանր ...է խոտանում: Ծանոթ խոսքեր է ասում Լեզուն բացած մի առու» (Համո Սահյան, «Գարնանամուտ»): 57. Խուլեղիմազազգիների ընտանիքին պատկանող դեղաբույս, որից խնկահոտ է բուրում...խոտ: 58. «Դալար այգու ստվերներում, ուր խոտերն են օրորվում, ուր առվակն է խոխոջում, ...ն է բողբոջում» (Հովհաննես Պողոսյան, «...»): 59. Հացազգիների ընտանիքին պատկանող միամյա բույս, որ համարվում է ցորենի մերձավորագույն ազգակիցը: Աճում է չոր վայրերում: 60. «Չուզել ես նորից դաշտ, անտառ ու..., Գարուն ամեն տեղ նոր կյանք ես վառել» (Վահան Տերյան, «Գարնանամուտ»): 61. «...դու արդյոք, երբ կգաս, կգաս Ծաղկածիծաղ իմ գարուն, գարուն, Գարնանային իմ երագ, ուրախություն վարարուն» (Գեղամ Սարյան, «Գարնանային»):

Կազմեց Վոլոդյա ՆԿՈՂՈՍԱՆԸ

«Կրթություն» թիվ 6-7 համարի խաչբառի պատասխանները
Ուղղահայաց
1. Ռասպուտին, 2. Հիմար, 3. ճակատը, 4. Մանան, 5. Փերիի, 6. Մարգարիտ, 9. Ժամ, 10. Լալ, 12. Սամարա, 13. Հավասի, 15. Ալիշան, 18. Սիրիուս, 22. Աղամանը, 23. Արածանի, 25. Լավաշ, 26. Բաղամ, 27. Լեցին, 28. Սիրաս, 29. Լոզան, 33. Հարիսա, 35. Նեպալ, 38. Իզարկա, 39. Աղայան, 41. Ղարիբյան, 42. Օրբելյան, 46. Պուստոն, 47. Տալյան, 49. Կուպեր, 50. Օղա, 51. Նուս, 52. Ամնար:
Հորիզոնական
7. Մակմիլան, 8. Վալեսյան, 11. Աթամաս, 13. Հարամի, 14. Չուբար, 16. Մարալ, 17. Իսհակ, 19. Բիլինա, 20. Ապարանի, 21. Մարկիչ, 24. Բալ, 26. Բալիս, 29. Լուի, 30. Նավառա, 31. Ինաքոս, 32. Դիմար, 33. Հավանա, 34. Աթայան, 36. Դալ, 37. Միմաս, 40. Նետ, 43. Սավինա, 44. Գրանադա, 45. Հիպարիս, 48. Պիծակ, 50. Օկտան, 52. Ալպեր, 53. Ուզանդա, 54. Նուկուն, 55. Պարթենոն, 56. Նազարյան:

